ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 7-ՐԴ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՆՈՒՇԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ՇՄԱԳ) ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կատարող՝

«Քոնսեկոարդ» ՍՊԸ տնօրեն՝ Մ. Թևոսյան

Երևան, 2025թ.

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՇԿ	Շինարարության կապալառու
ԲՀՏ	Բնապահպանության և հանքարդյունաբերության տեսչություն
ՇՄՍԱԳ	Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատում
ԲՍԿՊ	Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան
ԱԱՇՄ	Առողջություն, անվտանգություն, շրջակա միջավայր
ԻԳ	Իրականացնող գործակալություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՍԿ	Սպասարկման (շահագործման) կապալառու
ԾԱԱ	Ծրագրի ազդակիր անձինք
ՖՄՌ	Ֆիզիկական մշակութային ռեսուրսներ
ԱՊՄ	Անհատական պաշտպանության միջոցներ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 6
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ 6
3. ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ 7
3.1. ՀՀ ազգային օրենսդրությունը 7
3.2. Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային նապահպանական կոնվենցիաներին 14
3.3. Վարչական (կազմակերպական) շրջանակը 16
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ 19
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ 25
5.1. Աշխարհագրական դիրքը և ռելիեֆը 25
5.2. Մեյսմիկա և երկրաբանություն 26
5.3. Հիդրոերկրաբանություն 29
5.4. Կլիմա և օդային ավազան 29
5.5. Մթնոլորտային օդ 31
5.6. Աղմուկ և թրթռում 33
5.7. Ջրային ռեսուրսներ 34
5.8. Հողային ռեսուրսներ 35
5.10. Բուսական և կենդանական աշխարհ 36
5.10.1 Կենդանական և բուսական աշխարհ 36
5.11. Բնության հատուկ պահպանվող տարածքներ 40
5.12. Պատմամշակութային հուշարձաններ 40
5.13. Բնության հուշարձաններ 40
5.14. Սոցիալական և մշակութային ռեսուրսներ 41
6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ 45
6.1. Նախատեսվող գործունեության բնութագիրը 45
6.2. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ 46
6.3.Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը 58
7. ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 58
7.1. «Ոչ մի գործողություն» այլընտրանքային տարբերակ 58
7.2. Ծրագրի առավելությունները 59
8. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ 60

8.1. Ջուր. 60
8.2. Օգտագործվող նյութեր 61
9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ 62
9.1. Շինարարական փուլի ազդեցությունը և մեղմող միջոցառումները 62
9.1.1. Օդային ավազան 62
9.1.2. Ջրային ավազան 64
9.1.3. Թափոնների կառավարում 64
9.1.4. Հողային ռեսուրսներ 65
9.1.5. Կենսաբազմազանություն 65
9.1.6. Պատմամշակութային հուշարձաններ 66
9.1.7. Էկոլոգիապես զգայուն տարածքներ 66
9.1.8. Արտակարգ իրավիճակներ. 66
9.1.9. Աղմուկ և թրթռում 67
9.1.10. Սոցիալական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում 68
9.1.11. Աշխատանքի անվտանգություն և առողջություն 68
9.1.12. Հակահրդեհային միջոցառումներ 69
9.1.13 Սանիտարահիգենիկ և սանիտարահամաճարակային նորմեր 70
9.1.13. Բարեկարգում և կանաչապատում 70
9.2. Բնապահպանական ազդեցությունները և դրանք մեղմող միջոցառումները շահագործման փուլում 71
9.2.1. Օդային ավազան. 71
9.2.2. Ջրային ռեսուրսներ 71
9.2.3.Թափոնների կառավարում 71
9.2.4. Հողային ռեսուրսներ 71
9.2.5. Կենսաբազմազանություն 71
9.2.6. Աղմուկ 71
9.3. Սոցիալական ծրագիր 71
10. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ 72
11. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 73
ՀԱՎԵԼՎԱԾ 1՝ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ. ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ 74
ՀԱՎԵԼՎԱԾ 2՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ 89

ՀԱՎԵԼՎԱԾ 3՝ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՆԴ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ «ՎԱՆԱՆԴ ԱԳՐՈ» ՓԲԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՆՈՒՇԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ և ՊԱՏՄԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳԱՀԱՏԱԿԱՆ-ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 91

ՀԱՎԵԼՎԱԾ 4՝ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅՏԼՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) 103

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձեռնարկող	«ՎԱՆԱՆԴ ԱԳՐՈ» ՓԲԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	ՀՀ, ք. Երևան, Կենտրոն 0010, Մ. Ադամյան փողոց 2/1
Էլեկտրոնային հասցե	coo@vanandagro.am info.consecoard.am
Նախատեսվող գործունեության անվանումը	ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրի 7-րդ հողամաս հասցեում նուշի մշակման (պինդ կեղևի կոտրման) արտադրամսի կառուցում (քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000 քմ և ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով («Բ» կատեգորիա», Կետ 8, քաղաքաշինության բնագավառ, ենթակետ՝ ա))
Նախատեսվող գործունեության նպատակը	Նուշի մշակման (պինդ կեղևի կոտրման) արտադրամասի կառուցում և շահագործում
Նախատեսվող գործունեության իրականացման վայրը	ՀՀ, Արմավիրի մարզ, Բաղրամյան համայնք, Վանանդ բնակավայր, 7-րդ հողամաս
ՇՄԱԳ հաշվետվության մշակող	«Քոնսեկոարդ» ՍՊԸ
Պետական ռեգիստրի գրանցման համարը	286.120.999493
Գրանցման տարեթիվը	27.12.2017

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Նախատեսվող նուշի մշակման արտադրամասը կառուցվելու է վարձակալության իրավունքով «Վանանդ Ագրո» ՓԲԸ-ին պատկանող հողամասում, որը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրի 7-րդ հողամաս հասցեում: Տարածքի ընդհանուր մակերսը կազմում է 1.98859 հա (սեփականության վկայականը ներկայացված է Հավելված 2-ում):

Ներկայումս, նշված տարածքում գործունեություն է իրականացվում «Վանանդ Ագրո» ՓԲԸ-ն: Տարածքում առկա է մեկ շինություն, որը ծառայում է տարածքի վերահսկման նպատակներին և 3 կառուցված անգար/պահոցներ (որոնք չեն հանդիսանում սույն գործունեության առարկա), իսկ գործունեության տարածքի հարևանությամբ առկա են նուշի այգիներ: Տարածքը գտնվում է բնակելի տարածքներից բավականին մեծ հեռավորության վրա: Ամենամոտը՝ Վանանդ բնակավայրն է, որը նշված տարածքից գտնվում է մոտ 5կմ հեռավորության վրա: Տարածքը գտնվում է հայ-թուրքական սահմանին բավականին մոտ: Գործունեության ընթացքում հնարավոր բացասական ազդեցությունները բացառելու կամ նվազեցնելու նպատակով մշակվել են մեղմացնող միջոցառումներ, որոնք ներկայացված են սույն հաշվետվության Հավելված 1-ում (ԲԿՊ):

3. ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Սույն գլուխը ներկայացնում է նախատեսվող գործունեությանն առնչվող շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կարգավորող ազգային և միջազգային իրավական և մեթոդական փաստաթղթերը, ներառյալ բնապահպանական քաղաքականությունը, շրջանակային և ճյուղային օրենսդրական ակտերը՝ հողային հարաբերությունների, առողջության և անվտանգության հարցերով:

3.1. ՀՀ ազգային օրենսդրությունը

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն

Ըստ ՀՀ Սահմանադրության (ընդունվել է 1995թ., փոփոխվել 2005 և 2015 թվականներին) 10-րդ հոդվածի “Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը”:

Հոդված 33.2-ով սահմանված է որ. “ Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը”:

1991 թվականից առ այսօր ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ են ընդունվել, որոնք կարգավորում են շրջակա միջավայրի հետ կապված իրավահարաբերությունները:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և պաշտպանության մասին համապատասխան ազգային օրենքը հետևյալն է.

✓ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ Օրենք (հունիսի 21, 2014): Սույն հաշվետվությունը մշակվել է համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ

փորձաքննության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին (մայիսի 3, 2023) օրենքի դրույթների և պահանջների:

Կարևոր է նաև հաշվի առնել բնապահպանական որորտը կարգավորող հետևյալ իրավական ակտերը.

- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (1991, թարմացված 2006-ին),
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-121 (ընդունված 1994թ.) կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները»
- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998),
- «Բուսական աշխարհի մասին» (1999) օրենք,
- «Կենդանական աշխարհի մասին» օրենք (2000),
- «ՀՀ հողային օրենսգիրք» (2001),
- «Հիդրոօթերևութաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքը (2001),
- «Բնապահպանական կրթության մասին» ՀՀ օրենք (2001),
- «Ընդերքի մասին օրենսգիրքը» (2002),
- «ՀՀ ջրային օրենսգիրք» (2002),
- «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (2002),
- «Թափոնների մասին» օրենք (2004),
- «Ջրօգտագործողների միությունների և ընկերությունների մասին» օրենքը (2002),
- «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենք (2005),
- «Անտառային օրենսգիրքը» (2005),
- «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենք (1998),
- «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենք (1996),
- «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը (2006),
- «Սևանա լճի մասին ՀՀ օրենքը (2001),
- «Հողի օգտագործման հսկողության և պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (2008 թ.),
- «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2014 թ. նոյեմբերի 19-ի N 1325-N որոշում,
- «Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 71-Ն

որոշում,

- «Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 72-Ն որոշում,
- «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781 որոշում,
- ՀՀ Առողջապահության նախարարի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները եվ նորմերը հաստատելու մասին հրաման,
- «Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման եվ օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշում:

Գնահատման ընթացքում հաշվի են առնվել նաև բնապահպանական այլ օրենքների որոշ դրույթներ: Դրանք առնչվում են օդի պահպանությանը, մշակութային և պատմության հուշարձաններին, բուսական և կենդանական աշխարհներին, ջրօգտագործմանը, սեյսմիկ պաշտպանությանը, թափոններին, հիգիենային և աշխատողների պաշտպանությանը, ինչպիսիք են՝

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք

Հողօգտագործման և հողի աղտոտման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով (ընդունված 02.05.2001): Ելնելով օրենսգրքի պահանջներից ՀՀ կառավարության կողմից ընդունվել են “Հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջների և ռեկուլտիվացման ենթակա՝ խախտված հողերի դասակարգման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին” (29.05.2006 թիվ 750-Ն), “Հողերն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահաջների, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկի և հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին” (24.08.2006 թիվ 1277-Ն), “Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին” (02.11.2017 թիվ 1404-Ն), ինչպես նաև 02.11.2017 N1404-Ն որոշումները:

ՀՀ Կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը» ընդունվել է է ՀՀ փոխվարչապետի N1352-Ն հրամանով:

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք

Ջրօգտագործման, ջրահեռացման, մակերեսային և ստորգետնյա ավազանների օգտագործման և պահպանության հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով (ընդունված 04.06.2002) և Հայաստանի Հանրապետության «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքով:

ՀՀ մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը սահմանվել են ՀՀ կառավարության 27.01.2011թ. N75-Ն որոշմամբ հաստատված "Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմեր"-ով:

Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրք

ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պահպանության խնդիրները, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերք օգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության 2011թ. նոյեմբերի 28 ընդերքի մասին օրենսգրով:

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք

Սույն օրենսգիրքը ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, այն կարգավորում է կոլեկտիվ եւ անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման եւ դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաեւ աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները:

Աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի եւ գործատուի միջեւ, կազմված համաձայն աձխատանքային օրենսգրքի, այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների հիման վրա:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, խմբագրված՝ 03.05.2023թ. (ՀՕ-150-Ն)

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային

լսումների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության եւ նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

Օրենքը դասակարգում է գործունեության տեսակները ըստ ծավալների և ազդեցության մակարդակի՝ “Ա” և ”Բ” կատեգորիաների: Կատեգորիաները որոշված են ելնելով գործունեության ծավալներից և շրջակա միջավայրի վրա ազդեցության մակարդակից:

Փորձաքննությունն իրանացվում է մեկ փուլով՝ երկու հանրային լսումներով: Առաջին հանրային լսումը կազմակերպվում է ազդակիր համայնքի կողմից: Հանրային լսումից և քննարկումից հետո, քննարկման նյութերը, ՇՄԱԳ հաշվետվությունը և օրենքով պահանջով այլ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են ՀՀ շրջակա մջավայրի նախարարություն:

“Ա” կատեգորիայի համար փորձաքննությունը տևում է 80 աշխատանքային օր, իսկ “Բ” կատեգորիայի համար՝ 40 աշխատանքային օր, որի ընթացքում կազմակերպվում են երկրորդ հանրային քննարկումները: Գործընթացի ավարտին տրվում է փորձաքննական եզրակացություն:

“Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին” ՀՀ օրենք /12.12.1992թ./

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական եւ կազմակերպական հիմքերը, ինչպես նաեւ պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար եւ վտանգավոր գործոնների ազդեցությունը եւ բարենպաստ պայմաններ ապահովում նրա եւ ապագա սերունդների կենսունակության համար:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք

Օրենքն ընդունվել է 1998 թվականի նոյեմբերի 11-ին:

Սույն օրենքը սահմանում է հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի իրավական հիմքերը: Այն կարգավորում է գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները:

Հոդված 15-ում ներկայացվում է Հուշարձանների և պատմական միջավայրի

պահպանության ապահովման միջոցառումների համակարգը, այդ թվում հուշարձանների հայտնաբերումը և պետական հաշվառումը, հուշարձանների պահպանության գոտիների սահմանումը:

Հոդված 22-ում ներկայացվում է հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական և այլ աշխատանքների համար հողի հատկացումները, նախագծերի համաձայնեցումը և այդ աշխատանքների ընթացքում հուշարձանների պահպանության ու անվթարության ապահովումը:

Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի մասին օրենք

ՀՀ պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում սահմանում է “Բուսական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 23.11.1999 թ.):

Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի մասին օրենք

ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը սահմանում է “Կենդանական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 03.04.2000թ.):

Այս օրենքների պահանջների կատարումը ապահովելու համար ՀՀ կառավարության կողմից 29.01.2010 թ. թիվ 71-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ կենդանիների կարմիր գիրքը և 29.01.2010 թ. թիվ 72-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բույսերի կարմիր գիրքը:

Հայաստանի Հանրապետության թափոնների մասին օրենք

Թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը կարգավորվում են «Թափոնների մասին» ՀՀ օրենքով (ընդունված 24.11.2004):

ՀՀ բնապահպանության նախարարի 26.11.2006 թ. N 342-Ն հրամանով հաստատել է «ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը»:

ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006 թ. N 430-Ն հրամանով հաստատել է «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը»:

Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք (2005)

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում

բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները եւ սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, կարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների եւ բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները կարգավորում է “Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին” ՀՀ օրենքը (ընդունված 27.11.2006 թ.):

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2–III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”

Նշված սանիտարական նորմերով սահմանվել են արտադրական, սպասարկման և այլ տեսակի գործունեության արդյունքում առաջացող աղմուկի ազդեցության մակարդակը և ցուցանիշները:

Առողջապահության նախարարաի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներ:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”

Հիգիենիկ նորմերը սահմանում են թրթռման դասակարգումը, նորմավորվող չափորոշիչները, աշխատատեղում թրթռման սահմանային թույլատրելի մակարդակները ու բնակելի և հասարակական շենքերում թրթռման թույլատրելի մակարդակները:

3.2. Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային նապահպանական կոնվենցիաներին

Հայաստանի Հանրապետությունը ստորագրել և վավերացրել է մի շարք միջազգային կոնվենցիաներ և արձանագրություններ՝ առաջինը ստորագրելով Ռամսարի կոնվենցիան 1993 թ.-ին՝ խոնավ տարածքների պահպանության մասին: Այս ծրագրի համար առանձնահատուկ կարևորություն ունի այն փաստը, որ ՀՀ-ն փոխարինել է նախկին ԽՍՀՄ սահմանումներով մշակված բույսերի և կենդանիների Կարմիր գրքերը՝ ԲՊՄՄ չափորոշիչներին համապատասխան: Սույն ՇՄԱԳ հաշվետվությունը հիմնված է ԲՊՄՄ Կարմիր գրքերի վրա: Աղյուսակ 1-ում թվարկվում են համաշխարհային և տարածաշրջանային նշանակության բնապահպանական և մշակութային միջազգային այն կոնվենցիաներն ու համաձայնագրերը, որոնք ստորագրվել և/կամ վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

Աղյուսակ 1: Միջազգային բազմակողմանի բնապահպանական համաձայնագրեր, որոնք ստորագրվել և վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

	Կոնվենցիա կամ արձանագրություն. ընդունման օրն ու վայրը	Ուժի մեջ է մտել	Ստորագրվել է	Վավերացվել է	Մեկնաբանություն
1	Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես՝ ջրլող թռչունների բնադրավայրերի մասին, (Ռամսար, 1971)	1993	1993	Որպես իրավահաջորդ անդամ կցվել է ՀՀ ԱԳՆ պահանջով, 1993 թ.	
2	Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992)	1993	1992	1993	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ
3	Կենսաբանական անվտանգության մասին կարթագենյան արձանագրություն (Կարթեգենյա, 2000)	2004	2000	2004	
4	Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992)	1994	1992	1993	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ
5	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997)	2005	1997	2002	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ
6	Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին կոնվենցիա (Ժնև, 1979)	1997	1979	1996	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ
	ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանյան համատեքստում շրջակա	1997	1991	1996	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ

	Կոնվենցիա կամ արձանագրություն. ընդունման օրն ու վայրը	Ուժի մեջ է մտել	Ստորագրվել է	Վավերացվել է	Մեկնաբանություն
7	միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպու, 1991թ.)				
	«Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն (Կիև 2003թ.)	2011	2003	2010	
8	Աղտոտիչների արտանետման և տեղափոխման ռեգիստրների մասին արձանագրություն (Կիև, 2003)		2003		
9	Անապատացման դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (Փարիզ, 1994)	1997	1994	1997	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ
10	Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանման մասին կոնվենցիա (Բազել, 1989)	1999	1989	1999	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ
11	Օզոնային շերտի պահպանության մասին կոնվենցիա (Վիեննա, 1985)	1999	1989	1999	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ
	Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրություն (Մոնրեալ, 1987)	1999	1987	1999	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ
12	ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուս 1998թ.)	2001	1998	2001	
13	Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառման մասին կոնվենցիա (Ռոտերդամ, 1998)	2003	1998	2003	
14	ՄԱԿ-ի ԵՏՀ «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիա (Հելսինկի, 1992թ.)	1997	1992	1996	
	Ջրի և առողջության մասին արձանագրություն (Լոնդոն, 1999)				Վավերացման գործընթացում է
15	Կայուն օրգանական աղտոտիչների մասին Ստոկհոլմի	2004	2001	2003	

	Կոնվենցիա կամ արձանագրություն. ընդունման օրն ու վայրը	Ուժի մեջ է մտել	Ստորագրվել է	Վավերացվել է	Մեկնաբանություն
	կոնվենցիա (Ստոկհոլմ, 2001)				
16	Շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ռազմական կամ այլ կարգի թշնամական օգտագործումն արգելելու մասին կոնվենցիա (Ժնև, 1976)	2002	1976	2001	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 2002 թ
17	Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենսիա, 2000)	2004	2000	2004	
18	Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին կոնվենցիա (Փարիզ, 1972)	1993	1972	1993	Որպես իրավահաջորդ անդամակցվել է ՀՀ ԱԳՆ պահանջով, 1993 թ.
19	Էներգետիկ կանոնադրության պայմանագիր (Լիսաբոն, 1994 թ.)		1994		
	Էներգախնայողության և հարակից բնապահպանական ասպեկտների վերաբերյալ էներգիայի կանոնադրության արձանագրություն (Լիսաբոն, 1994)		1994		
20	Բեռնի կոնվենցիա- Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին Եվրոխորհրդի կոնվենցիա (Բեռն, 1979)	2008	1979	2008	

3.3. Վարչական (կազմակերպական) շրջանակը

Այս բաժնում ներկայացված են նախագծի իրականացման մեջ ներառված հիմնական մասնակիցները և ամփոփվում է դրանց դերը եւ պարտականությունները, առաջնահերթ, բայց ոչ բացառապես բնապահպանական տեսանկյունից:

Իրականացնող գործակալություն (ԻԳ)

Ներկայացվող գործունեության պատվիրատու է հանդիսանում՝ «Վանանդ Ագրո» ՓԲԸ-ն, որի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն 0010, Մ. Ադամյան փողոց 2/1:

Մասնավորապես ՇՄՍԱԳ շրջանակներում, ԻԳ-ն պատասխանատու է լինելու ամբողջ նախագծի իրականացման մոնիթորինգի համար, որը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

- Հետևել, որ բնապահպանական կառավարման պլանի բոլոր պահանջները՝ (ներառյալ բնական միջավայրի պահպանության պլանավորումը և մեղմացնող

միջոցառումները), կապված նախագծի իրականացման հետ, պատշաճորեն ներառվեն ծրագրի մրցութային փաստաթղթերի մեջ:

- Հետևել, որ բոլոր անհրաժեշտ թույլտվությունները և/կամ համաձայնությունները, որոնք պահանջվում են համապատասխան կառավարական մարմինների կողմից, կառուցողը ստանա նախքան նախագծի շրջանակներում որևէ շինարարական աշխատանքների մեկնարկը:
- Համոզվել, որ կառուցողները (կապալառուներ) լիարժեք կերպով պատկերացնում են իրենց պարտականությունները՝ շրջակա միջավայրի պահպանության խնդիրների մեղմացման հարցում՝ կապված ԲԿՊ իրականացման ընթացքում աշխատակազմի հավաքագրման և վերապատրաստման հետ:
- Կառուցողի կողմից ԲԿՊ իրականացման մոնիթորինգ, համաձայն մոնիթորինգի պլանի:

Շինարարական Կապալառուն (ՇԿ)

Նախատեսվող նուշի մշակման արտադրամասը կառուցելու է շինարարական կապալառու ընկերությունը:

Կառուցողը պատասխանատու է բնապահպանական կառավարման համար, որը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

- համապատասխան օրենքների, կանոնակարգերի եւ ստանդարտների պահանջների ապահովում
- անհրաժեշտ թույլտվությունների եւ / կամ համաձայնությունների ձեռք բերում
- իրականացնել մեղմացնող միջոցառումներ՝ շինարարական փուլի ազդեցությունները նվազեցնելու համար
- ապահովել բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի միջոցառումների իրականացումը
- հետևել, որ պահպանվեն առողջության և անվտանգության պահանջները:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների սահմանում իրականացնում է շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, ինչպես նաև բնական պաշարների ողջամիտ օգտագործման ու վերականգնման պետական քաղաքականության ձևավորումն ու կառավարումը:

Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով:

ՇՄՆ իրականացնում է գործառույթներ մի քանի առանձնացված

ստորաբաժանումների միջոցով.

✓ Նախատեսվող գործունեության բնապահպանական փորձաքննության ընթացակարգը իրականացվում է “Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն” ՊՈԱԿ կողմից:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը ՀՀ գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունը, էներգետիկայի եւ բնական պաշարների կառավարման բնագավառում:

Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով.

- Օգտակար հանածոների պաշարների գործակալություն,
- Ընդերքի տրամադրման գործակալություն,
- Էներգետիկայի պետական տեսչություն,
- Ընդերքի պետական տեսչություն,
- Ջրային տնտեսության պետական կոմիտե:

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը ստեղծվել է համաձայն «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության հիման վրա: Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը իրականացնում է վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթներ, ինչպես նաև կիրառում է պատասխանատվության միջոցներ շրջակա միջավայրի պահպանության, բնական ռեսուրսների օգտագործման, վերարտադրության և ընդերքօգտագործման բնագավառներում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:

Առողջապահության նախարարություն

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում եւ իրականացնում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

Նախարարության կազմում գործում են.

<u>Աշխատակազմի մասնագիտացված ստորաբաժանումները.</u>

- Բժշկական օգնության քաղաքականության վարչություն,
- Մոր և մանկան առողջության պահպանման վարչություն,
- Դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչություն,
- Հանրային առողջության բաժին,
- և այլն:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Նախատեսվող նուշի մշակման արտադրամասը կառուցվելու է վարձակալության իրավունքով «Վանանդ Ագրո» ՓԲԸ-ին պատկանող հողամասում, որը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրի 7-րդ հողամաս հասցեում: Տարածքի ընդհանուր մակերսը կազմում է 1.98859 հա: Այն գտնվում է Վանանդ բնակավայրից մոտ 5կմ (դեպի հարավ-արևմուտք) հեռավորության վրա, Մ-5 ճանապարհի հարևանությամբ: Տարածի հարևանությամբ չկան շենք-շինություններ և/կամ բնակելի գոտիներ: Գործունեության իրականացման ընթացքում շենքերի ապամոնտաժում և ծառաթփային բուսականության հատում նախատեսված չէ:

«Վանանդ Ագրո» ՓԲԸ-ն ստեղծվել է 2017թ դեկտեմբերին և զբաղվում է նշի աճեցմամբ Հայաստանում՝ նոր այգիների հիմնման միջոցով՝ չօգտագործված, բայց բերրի հողերի մշակմամբ և ժամանակակից արդյունավետ ոռոգման ենթակառուցվածքների տեղադրմամբ: Ծրագրի նպատակն է՝ ժամանակակից ապացուցված գյուղատնտեսական տեխնոլոգիաների և սննդի անվտանգության մեթոդների ներդրումը՝ ֆերմայում բարձր ավելացված արժեքով արտադրության հասնելու համար:

Վերը նշված նպատակներով ծրագիրն իրականացվում է երկու ընկերությունների կողմից. «Վանանդ Լենդ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հողի սեփականատերն է, և «Վանանդ Ագրո» ՓԲԸ-ն՝ ծրագրի հիմնական գործառնական իրականացնողը, որը վարձակալում է ֆերմայի հողերը «Վանանդ Լենդ» ՓԲԸ-ից:

Ֆերմայի հողատարածքը գտնվում է Արմավիրի մարզի Վանանդ բնակավայրի վարչական տարածքում՝ Հայաստանի ամենազարգացած գյուղատնտեսական մարզերից մեկում: Հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 837 հա, որի մեծ մասը օգտագործում է նուշի այգիների համար: Ֆերմայի տեղանքի կլիման, ռելիեֆը, հողը և ջուրը բարենպաստ են նուշ աճեցնելու համար: Երևանի և ֆերմայի միջև հեռավորությունը 65 կմ է, հողատարածքը անմիջապես հարում է M5 մայրուղուն և միացված է երկրի հիմնական բարձրավոլտ էլեկտրացանցին և ոռոգման

համակարգին:

Ծրագրի իրականացումը սկսվել է 2018 թվականին՝ ֆերմայի ենթակառուցվածքների առանցքային տարրերի կառուցմամբ, ինչպիսիք են ջրի կուտակման ջրամբարները, պոմպակայանները, ներտնտեսային էլեկտրամատակարարման ցանցը, կաթիլային ոռոգման համակարգը, ինչպես նաև 660 հեկտար նշի այգիների աստիճանաբար տնկումը, որը ավարտին է հասցվել 2025թ երկրորդ եռամսյակ: Նշի առաջին բերքը հավաքվել է 2022 թվականին, ծառերի մեծացման արդյյունքում բերքի քանակը աստիճանաբար ավելանալու է: Այգիների ամբողջական հասունացումից հետո ակնկալվում է ստանալ մոտ 3,000 տոննա կեղևով նուշ: Ստացված բերքը իրացվում է Հայաստանում և արտահանվում է:

Տարեց-տարի ավելացող բերքի մշակման համար նախատեսվում է կառուցել նուշի ժամանակակից ավտոմատացված կոտրման և սորտավորման արտադրամաս՝ 2 տոննա 1 ժամում արտադրողականությամբ: Արտադրամասի սարքավորումները մատակարարվելու և տեղադրվելու էն ոլորտում առաջատար Borrell կազմակերպության կողմից:

Արտադրամասի շենքը միահարկ է, 2160մ^2 ընդհանուր մակերեսով, կառուցվելու է մետաղական հիմնակմախքով և սենդվիչ պանելներով: Արտադրամասի էլ. սնուցումը իրականացվելու է սեփական ենթակայանից: Նախատեսվում է տեղադրել ջեռուցման, օդափոխության և հակահրդեհային համակարգեր: Արտադրամասում աշխատելու է 12-15 մարդ:

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ հողի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտնեսական արտադրական օբյեկտների:

Հողատարածքի մակերեսը և կադաստրային ծածկագիրը ներկայացված են ստորև.

Աղյուսակ 2: Տեղամասի տվյալները

N	Բնակավայր	Կադաստրային ծածկագիր	Մակերես (հա)
1	Վանանդ	04-089-0115-0057	1.98859

<u>Նուշի մշակման արտադրամասի նպատակային նշանակությունը.</u>

ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրի տարածքում

նախատեսվող նուշի մշակման արտադրամասի կառուցումն ուղղված է գյուղատնտեսական արտադրության արժեքային շղթայի զարգացումին, բարձրորակ մթերքի արտադրությանն ու տեղական տնտեսության խթանմանը: Արտադրամասի կառուցման հիմնական նպատակային ուղղություններն են՝

- **Գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման կարողությունների ընդլայնում՝** Նոր արտադրամասը հնարավորություն կտա տեղական արտադրողներից մթերված նուշի մաքրում, տեսակավորում և փաթեթավորում իրականացնել տեղում՝ նվազեցնելով մթերքի տեղափոխման ծախսերն ու ժամանակը:
- **Արտադրանքի որակի և մրցունակության բարձրացում՝** Արտադրամասը կկահավորվի ժամանակակից վերամշակման սարքավորումներով և կգործի սննդամթերքի անվտանգության բարձր ստանդարտներով՝ ապահովելով միջազգային շուկաներին համապատասխան որակ:
- **Տեղական տնտեսության և համայնքի զարգացման խթանում՝** Արտադրամասի գործունեությունը կստեղծի նոր աշխատատեղեր՝ արտադրական և տեխնիկական անձնակազմի համար, ինչը կնպաստի Վանանդ և հարակից բնակավայրերի սոցիալ-տնտեսական ակտիվացմանը:
- **Գյուղատնտեսական ենթակառուցվածքների արդիականացում՝** Նախագծի իրականացումը կնպաստի վերամշակող արդյունաբերության զարգացմանը Արմավիրի մարզում՝ ապահովելով մատակարարման շղթայի կայունություն և երկարաժամկետ ներդրումներ:
- **Արտահանման ներուժի ավելացում՝** Բարձրորակ արտադրանքի շնորհիվ նախատեսվում է ոչ միայն ապահովել ներքին շուկայի պահանջարկը, այլև մեծացնել արտահանման ծավալները՝ բարձրացնելով Հայաստանի գյուղատնտեսական արտադրանքի միջազգային ճանաչելիությունը:

Տարածքում և դրա հարևանությամբ չկան ջրային աղբյուրներ (գետեր, լճեր), ինչպես նաև պատմամշակութային արժեք ներկայացնող հուշարձաններ: Տարածքը վարձակալության իրավունքով պատկանում է «Վանանդ Ագրո» ՓԲԸ-ին և օգտագործվել է երկար ժամանակ, ուստի մեծապես ենթարկված է մարդածին ազդեցության:

Տարածքում չեն արձանագրվել ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ և ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ:

Տարածքի իրադրային սխեման և գլխավոր հատակագիծը ներկայացված են ստորև.

Պատկեր 1: Նախատեսվող գործունեության տարածքի իրադրության սխեման

Walnut Farms CJSC
M5
Vanand Agro
Վանանդ Ագրո
M5
АРМЕНИЯ
Аракс
АРМЕНИЯ
Аракс
ՅԱՅԱՍՏԱՆ
Google Earth
900 m

Պատկեր 2: Գլխավոր հատակագիծ





Պատկեր 3։ Քարտեզ-սխեմա

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

5.1. Աշխարհագրական դիրքը և ռելիեֆը

ՀՀ տարածքը զբաղեցնում է Հայկական բարձրավանդակի հյուսիս-արևելյան հատվածը, որը կազմված է ալպիական լեռների ձևավորման գործընթացների արդյունքում առաջացած երիտասարդ ալիքավոր լեռնաշղթաներից, որը կոչվում է Փոքր Կովկաս, ինչպես նաև հյուսիս-արևելքում տեղակայված հրաբխային կազմավորման զանգվածներից, որոնք կազմում են Հայկական հրաբխային բարձրավանդակի մի մասը (Արագած, Արա, Հատիս և Գեղամա ևն)։

Հետազոտվող տարածքը գտնվում է Հայաստանի Հանրապետության արևմտյան մասում՝ Արմավիրի մարզում։ Վանանդ բնակավայրը Արմավիր մարզկենտրոնից գտնվում է 26 կմ հեռավորության վրա։ Ներկայացված տարածքը գտնվում է ծովի մակերևույթից մոտ 960մ բարձրության վրա։

Գեոմորֆոլոգիական տեսակետից տեղամասը գտնվում է Արարատյան լճա-գետային հարթավայրի հյուսիս-արևմտյան եզրամասի հարակից տարածքում, ներկայացված է լավային սարավանդով, որը Արագածի հրաբխային զանգվածի հարավ-հարավ-արևմտյան լավային լանջերի հարթավայրային շարունակությունն է,

ավարտվող Արաքսի հովտի ձախ թևում:

Ռելիեֆի ձևագրական տիպը թեք է, դարավանդավորված (1200-2100մ):

Պատկեր 4: Գործունեության տարածքի ռելիեֆը


ԵՐԵՎԱՆ
ՄՈՍԿՎԱ
ԳՈՐԻՍ
ՍԵՎԱՆ
ՄԱՍԻՍ
ՄՈՍԿՎԱ
ՄՅՈՒՆԻՆ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ԱՐՄԱՎԻՐ
ՍԱՐԱՏՈՎ
ՍՈՉԻ
ՍՈՉԻ
ՍՈՉԻ



Պատկեր 6։ ՀՀ սեյսմիկ շրջանացման սխեմատիկ քարտեզը /նկարը վերցված է ՀՀ Պետական վիճակագրական վարչության կայքից։ a=0.2g, մինչև 3 բալ, a= 0.3g, 3-ից 9 բալ, a=0.4g, 9 և ավելի բալ, a=0.5g, կործանարար երկրաշարժ/



Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված՝ ՀՀՇՆ II-20.04.2020թ. Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերի սահմանված են չափանիշներ, համաձայն որի, ըստ ուժգնության աճող հաջորդականության առկա են՝ 1, 2, 3 սեյսմիկ գոտիներ, որոնց համար գրունտի հորիզոնական արագացման մեծությունը համապատասխանաբար՝ 300, 400 և 500 սմ/վրկ^2 է: Նույն հրամանի հավելվածում ներկայացված է ՀՀ բնակավայրերի ցուցակը ըստ սեյսմիկ գոտիների: Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում: Հայցվող տարածքին վերագրվում է գրունտի հորիզոնական արագացում՝ a=300 սմ/վրկ^2, A= 0.3g :

Պատկեր 7: Սեյսմիկ գոտիների քարտեզ

5.3. Հիդրոերկրաբանություն

Ուսումնասիրվող տարածքում բացակայում են Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, ինչպես նաև ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

5.4. Կլիմա և օդային ավազան

Կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և համապատասխան կլիմայական ցուցանիշները:

Այդ փաստաթղթով սահմանում են կլիմայական պարամետրերը, որոնք կիրառվում են շենքերի և շինությունների, ջեռուցման, օդափոխության, օդի լուսավորման, ջրամատակարարման համակարգերի նախագծման, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման ժամանակ: Կլիմայական ցուցանիշները հիմնականում հաշվարկված են Հայաստանի Հանրապետության այն բնակավայրերի համար, որտեղ տեղակայված օդերևութաբանական կայանները ունեն դիտարկումների բավականին երկար (30 տարուց ոչ պակաս) շարք: Ցուցանիշները սրբագրված են վերջին տասնամյակի (2009թ.

ներառյալ) տվյալների հաշվառումով: Տեղումների որոշ հարաչափերի հաշվարկման համար օգտագործվել են նաև կարճ շարք ունեցող օդերևութաբանական դիտակետերի տվյալները: Տարածքի կլիմայի բնորոշման համար հիմք է վերցրվել մոտակայքում գտնվող օդերևույթաբանական կայանի երկարատև դիտարկման արդյունքները:

Կլիմայական պայմանների մանրամասն ցուցանիշները ներկայացված են ստորև՝ աղյուսակներում: Ընդհանուր առմամբ Ծրագրի համար հայցվող տարածքը գտնվում է ցածրադիր կլիմայական շրջանում, որտեղ. Ամառ՝ շոգ, չոր, միջին ջերմաստիճանը հուլիսին 21°C, հարաբերական խոնավությունը (ժ 15-ին) 35% ցածր, բարենպաստ լեռնահովտային քամիներ, քամու միջին արագությունը՝ 2.0-3.0 մ/վ: Ձմեռ՝ ցուրտ, անհողմ, միջին ջերմաստիճանը հունվարին 0-5°C, հարաբերական խոնավությունը (ժ 15-ին) 60-70%, քամու միջին արագությունը՝ 2.0-3.0 մ/վ: Ներկայացված Ծրագրի իրականացման ամենմոտ օդերևութաբանական ցուցանիշները վերլուծելով, կարելի է նշել, որ ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը կազմել է 60% և ամենաշոգ ամսվանը՝ 30%, մթնոլորտային միջին տարեկան տեղումները կազմում են 254մմ, իսկ տարվա մեջ միջին ձնածածկ օրերի քանակը՝ 38: Առանց արևի օրերի քանակը կազմում է տարեկան 71օր (2370ժ.):

Կլիմայի և օդային ավազանի մասին տեղեկատվական ցուցանիշները վերցված են Ծրագրի համար հայցվող տարածքին ամենամոտը գտնվող «Արմավիր» օդերևութաբանական դիտակետից:

Աղյուսակ 3: Օդի հարաբերական խոնավությունը (%)

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը. %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		Ամենա-ցուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
Արմավիր	75	70	62	56	56	50	46	47	51	61	70	76	60	60	30

Աղյուսակ 4: Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը												
	ըստ ամիսների												Տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VII I	IX	X	X I	XII	
Արմավիր	18	18	23	33	43	24	13	9	11	25	20	17	254
	19	21	26	30	47	21	38	31	35	30	28	20	47

Աղյուսակ 5: Ձյան ծածկույթ

Բնակավայրի անվանումը	Ձյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը
1	2	3	4	5
Արմավիր	42	38	92	70

Աղյուսակ 6: Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների Միջին արագությունը, մ/վ								Անհողմությունների կրկնելիությունը,%	Միջին ամսական առավելագույն մ/վ	Միջին տարեկան արագությունը,մ/վ	Ուժեղ քամիներով (15մ/վ□) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիս- Արևելյան (ՀսԱր)	Արևելյան (Էր)	Հարավ- Արևելյան (ՀՀԱր)	Հարավ (Հվ)	Հարավ- Արևմտյան (ՀՀԱՐմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս- Արևմտյան (ՀսԱՐմ)					20	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Արմավիր	917,1	Հունվար	7	5	17	8	9	8	28	18	77	0.5	0,9	15	24	26	27
			2,2	2,2	1,9	1,9	1,8	2,3	2,5	2,8							
		Ապրիլ	5	7	28	11	9	9	20	11	52	1,3					
			2,8	3,4	2,5	2,7	2,7	3,7	3,0	3,7							
		Հուլիս	3	8	31	16	11	7	16	8	55	1,1					
			2,1	2,5	1,9	2,2	1,1	2,6	2,7	2,6							
		հոկտեմ-բեր	5	4	23	16	9	7	22	14	72	0,6					
			2,2	2,8	1,9	2,9	2,8	3,6	3,1	3,8							

Աղյուսակ 7: Ձմռան սկիզբը, վերջը և տևողությունը

Բնակավայրի անվանումը	Սկիզբ	Վերջ	Տևողություն, օր
1	2	3	4
Արմավիր	10 դեկտեմբեր	19 փետրվար	72

Աղյուսակ 8: Արևափայլի տևողություն (ժ) և առնաց արևի օրերի քանակ (օր)

Բնակավայրի անվանումը	Արևափայլի տրողությունը և առանց արևի օերերի քանակաը													
	Տևողությունը	ըստ ամիսների												Տարեկան
		I	II	III	IV	V	VI	VII	VII I	IX	X	X I	XII	
Արմավիր	ժ	71	111	162	177	236	310	328	314	269	186	139	67	2370
	օր	16	10	7	5	1	0.5	1	0.1	1	5	7	17	71

5.5. Մթնոլորտային օդ

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են

արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ:

Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման: Մթնոլորտային օդի որակի ուսումնասիրությունները կատարվում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից դիտակետերի միջոցով: Վանանդ և մոտակա բնակավայրերի տարածքում չկան էկոմոնիթորինգի և բնակավայրի օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները որոշվում են հաշվարկային եղանակով՝ ըստ բնակչության թվաքանակի:

Ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքէջի՝ մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները ներկայացվում են ստորև, որոնց թվին է պատկանում նաև Վանանդ բնակավայրը:

- Փոշի՝ 0.071 մգ/մ^3;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ^3;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.023 մգ/մ^3;
- Ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ^3:

Պատկեր 8։ ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց

5.6. Աղմուկ և թրթռում

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերով:

Աղմուկի առավելագույն թույլատրելի ցուցանիշները ըստ այդ բերված են աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9: ՀՀ սահմանված աղմուկի նորմերը

Ընկալիչ	Ժամերը	Աղմուկի առավելագույն թույլատրելի մակարդակը	
		dBL_{AEQ}	dBL_{AMAX}
Բնակելի և հասարակական շենքերի մոտ	07:00-23:00	55	70
	23:00-07:00	45	60

Աղյուսակ 10: Լարվածության եվ ծանրության տարբեր կատեգորիաների աշխատանքային գործունեության աշխատատեղերում ձայնի սահմանային թույլատրելի մակարդակները եվ ձայնի սահմանային մակարդակները դԲա-ով

Աշխատանքային	Աշխատանքային գործընթացի ծանրության կարգ

գործընթացի լարվածության կարգ	թեթև ֆիզիկական ծանրաբեռն-վածություն	միջին ֆիզիկական ծանրաբեռն-վածություն	1 աստիճանի ծանր աշխատանքի	2 աստիճանի ծանր աշխատանքի	3 աստիճանի ծանր աշխատանքի
Թեթև աստիճանի լարվածություն	80	80	75	75	75
Միջին աստիճանի լարվածություն	70	70	65	65	65
Աշխատանքի 1 աստիճանի լարվածություն	60	60			
Աշխատանքի 2 աստիճանի լարվածություն	50	50			

Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների աղբյուր կարող են հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցները և այգիներում աշխատող տեխնիկական միջոցները: Ելակետային իրավիճակում նուշի մշակման արտադրամասի համար հայցվող տարածքում աղմուկի մակարդակը միջինի է, քանի որ տեղանքում կան բազում այգիներ և այն երկար ժամանակ ենթարկվել է մարդածին ազդեցության: Գործնականում աղմուկի աղբյուրները մարդածին են:

5.7. Ջրային ռեսուրսներ

ՀՀ կառավարության կողմից “Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին” որոշման (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշում) սահմանված է ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար: Տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ գերազանց (1-ին դաս), լավ (2-րդ դաս), միջակ (3-րդ դաս), անբավարար (4-րդ դաս) և վատ (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացնում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը (հետագայում՝ ՊՈԱԿ):

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է գետերի, ջրամբարների, Որոտան-Արփա, Արփա-Սևան ջրատարների և Սևանա լճի 151 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական 40-65 ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային

օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 27-ի N75-Ն որոշման:

Հայաստանի Հանրապետության գետերի դիտակետերի 10 %-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս (լավ), 35 %-ում՝ 3-րդ դաս (միջակ), 23 %-ում՝ 4-րդ դաս (անբավարար) և 31 %-ում՝ 5-րդ դաս (վատ): Նախատեսված Ծրագրի տարածքում ու դրա հարևանությամբ չկան ջրային ռեսուրսներ, որոնց վերաբերյալ հնարավոր է ներկայացնել աղտոտման վերաբերյալ տեղեկատվություն:

Նախատեսվող գործունեության տարածքում և դրա հարևանությամբ առկա չեն ջրային ռեսուրսներ, որոնք կարող են ենթարկվել որևէ ազդեցության Ծրագրի իրականացման շրջանակներում: Տարածքին ամենամոտ ջրային ռեսուրսը Արաքս գետն է, որը գտնվում է ներկայացված տարածքից ավելի քան 1.2կմ հեռավորության վրա:

5.8. Հողային ռեսուրսներ

Ռելիեֆի ձևագրական տիպը թեք է, դարավանդավորված (1200-2100մ):

Արմավիրի մարզի լանդշաֆտը ցածրադիր մասերում կիսաանապատային է, նախալեռնային շրջաններում՝ խայտաբղետ, կավաբեր, տեղ-տեղ աղակալված հողերը, կան նաև անապատային տեղամասեր: Արաքսի և նրա վտակների փուխր բերվածքներում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալած տարածքներով, ցածրադիր ողողատներում՝ գերխոնավ հողերն ու ճահճուտները: Լճային նստվածքների հզորությունը հասնում է մի քանի տասնյակ մետրի:

Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը: Բնորոշ են նաև բաց գորշագույն և գորշագույն հողերը, որոնք հիմնականում ոռոգվում են գյուղատնտեսական նպատակով: Այս գոտու լանդշաֆտների մեծ մասը վերափոխվել են ջերմասեր կուլտուրաների ագրոլանդշաֆտների: Արարատյան հարթավայրի արևմտյան մասում հանդիպում են աղակալած հողեր՝ ալկալահողերը: Տեղ-տեղ երևում են թաքիրներ՝դեղնա-սպիտակավուն կավի ճաքճքած մակերեսով տարածություններ: Չոր ցամաքային կլիմայի պայմաններում գերակշռում են ֆիզիկական հողմնահարման պրոցեսները՝պայմանավորելով քայքայված փուխր նյութերի կուտակումը և կենսանյութի արագ հանքայնացումը:

Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես պտղաբուծության(ելակ, ծիրան, խաղող), բանջար-բոստանային

մշակաբույսների արտադրության, այնպես էլ խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծության, խոզաբուծության և թռչնաբուծության համար:

Ծրագրի համար հայցվող տարածքում հողերի աղտոտվածության մասին տեղեկատվությունը բացակայում է:

Հողերի էրոզվածության աստիճանը V-րդ կարգի է՝ 45-70%:

Պատկեր 8. Հողերի էրոզվածությունը



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

ՀՈՂԵՐԻ ԷՐՈԶԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ

աստիճանը (կարգը)	%	մակերեսը* (հազ. հա)	այդ թվում							
			չէրոզացված		թույլ էրոզացված		միջին էրոզացված		ուժեղ էրոզացված	
			հազ. հա	%	հազ. հա	%	հազ. հա	%	հազ. հա	%
I	մինչև 1	587,7	583,5	99,3	4,2	0,7	—	—	—	—
II	1-10	84,2	76,0	90,3	7,0	8,3	1,2	1,4	—	—
III	10-25	140,0	105,1	75,1	30,5	21,8	3,3	2,3	1,1	0,8
IV	25-45	578,3	322,6	55,8	182,2	31,5	55,7	9,6	17,8	3,1
V	45-70	674,3	276,5	41,0	267,5	39,7	103,0	15,3	27,3	4,0
VI	70-ից ավելի	635,5	64,6	10,2	135,6	21,3	285,1	44,9	150,2	23,6
	Ընդամենը	2700,0	1428,3	52,9	627,0	23,2	448,3	16,6	196,4	7,3
	Արմատական ապարների մերկացումներ	* Առանց կառույցների և ջրային ավազանների								

Անմիջապես նախատեսվող գործունեության տարածքում չկա բերրի հողաշերտ, քանի որ այն երկար ժամանակ ենթարկվել է մարդածին ազդեցության:

5.10. Բուսական և կենդանական աշխարհ

5.10.1 Կենդանական և բուսական աշխարհ

ՀՀ Արմավիրի մարզի տարածքում նախատեսվող գործունեության ժամանակ հայցվող տարածքում հնարավոր ազդեցություն կրող կենսաբազմազանության և էկոհամակարգերի ելակետային տվյալների մշակման ժամանակ տեղեկատվությունը ստացվել է բնության պահպանման և պաշտպանության մասին ՀՀ օրենքներից, ՀՀ-ի կողմից ստորագրված համապատասխան միջազգային կոնվենցիաներից և պայմանագրերից, ինչպես նաև կենսաբազմազանության և էկոհամակարգերի

վերաբերյալ միջազգային այլ քաղաքականություններից և չափորոշիչներից:

Ուսումնասիրվել է տարածքի կենսաբազմազանությունը, նշվել են այն էկոհամակարգերը, որոնք կարող են Ծրագրի ազդեցությունը կրել, ինչպես նաև պարզվել են հետևյալ տարրերի հնարավոր առկայությունը՝

- Բնության պահպանության օրենսդրորեն պաշտպանվող տարածքները, որոնք գտնվում են Ծրագրի հնարավոր ազդեցության գոտում:
- ՀՀ-ում պաշտպանվող տեսակները (գրանցված են ՀՀ Կարմիր գրքում):
- Այն տեսակները, որոնք ըստ մասնագետների համարվում են վտանգի եզրին գտնվող կամ ՀՀ-ում կամ տարածաշրջանում դրանք նվազում են, ինչի պատճառով Ծրագրի ազդեցության տարածքը կարող է համարվել առանցքային բնական կենսամիջավայր:
- Տեսակներ, որորոնք Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ) կողմից ընդգրկվել են համաշխարհային և եվրոպական մակարդակով Անհետացման կամ Ծայրահեղ անհետացման ցուցակներում:
- Բնական կենսամիջավայրեր կամ էկոհամակարգեր, որոնք կարող են համարվել «կրիտիկական»:

Ծրագրի ազդեցության տարածքում բուսականության տիպերը բացահայտվել և դասակարգվել են դաշտային հետազոտությունների արդյունքում: Դաշտային հետազոտությունը կատարվել է երկրահետազոտության դասական եղանակով՝ երթուղային և կիսաստացիոնար, հետազոտվող տարածաշրջանը պայմանականորեն բաժանվել է ըստ հիմնական բիոտոպերի՝ հաշվի առնելու տեղանքի ռելիեֆը և լանդշաֆտը: Տրվել է բուսականության նկարագրությունը: Հետազոտության ընթացքում կատարվել են հանդիպող բուսատեսակների գրանցում և թվային լուսանկարում: Եթե դաշտային պայմաններում հնարավոր չէ որոշել բուսատեսակը, ապա վերցվել է բուսատեսակի ամբողջական կամ բույսի առանձին օրգանների նմուշներ՝ լաբորատոր պայմաններում այն ուսումնասիրելու նպատակով: Տեսակների որոշումը և անվանումների ճշգրտումը կատարվել է Հայաստանի ֆլորայի 11 հատորներով (Флора Армении, 1954-2010), բույսերի գիտական անվանումները ճշտվել են ըստ Ս. Չերեպանովի մեթոդական ձեռնարկի (Черепанов, 1995), ուսումնասիրվել են մի շարք լրացուցիչ աշխատություններ, մասնագիտական գրականություն: Հազվագյուտ և անհետացող տեսակների կարգավիճակը ճշտվել է ըստ Հայաստանի բույսերի և կենդանիների Կարմիր Գրքերի (2010):

Ըստ Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանների (Ա.Լ. Թախտաջյան, 1954) հայցվող տարածքը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանում: Հայցվող տարածքը գտնվում է մոտավորապես 950-960 մ բացարձակ բարձրությունների վրա: Այս

բարձրությունների վրա սովորաբար բուսականության հիմնական տիպը կիսաանապատայինն է՝ դաշտավլուկազգի, տարախոտա-դաշտավլուկազգի համակեցություններով:

Տարածքում կան խախտված տարածքներ՝ անթրոպոգեն գործոնով պայմանավորված՝ շինհրապարակ, կառուցված անգարներ և այլն: Հայցվող տարածքի եզրագծի մի հատվածում կան բարդու մեկ շարք տնկարկ: Տարածքից արևելք նշի այգիներ են:

Տարածքում հանդիպող բուսատեսակներից են՝ Բարդածաղկավորներից (Asteraceae) հանդիպում է Անթառամ ծալքավոր (Helichrysum pilcatum DC), Տերեփուկ փռված (Centaurea diffusa Lam.), Կոնիզա կանադական (Conyza canadensis (L.) Cronquist), Խոզնափուշ խոշորաթև (Cousinia macroptera C.A.Mey.), Ճարճատուկ սովորական (Cychorium intybus L.), Կաթնուկ կողմնաց (Lactuca serriola L.), Կռատուկ Պալադինի (Arctium palladinii (Marc.) Grossh.), Օշինդր բուրավետ (Artemisia fragrans Willd.), Հազարատերևուկ սովորական (Achillea millefolium L.), Հազարատերևուկ Բիբերշտեյնի (Achillea biebersteinii Afan.), Խիժաճարճատուկ կնյունանման (Chondrilla juncea L.): Դաշտավլուկազգիներից (Poaceae) հանդիպում է Անհավասարածաղիկ անպտուղ (Anisantha sterilis (L.) Nevski), Արվանտակ մատնաձև (Cynodon dactilon (L.) Pers.), Հավակորեկ սովորական (Echinochloa crus-galii (L.) P. Beauv.), Անապատասեզ կոշտամազ (Eremopyrum hirsutum (Bertol) Nevski): Գաղտրիկազգիներից (Boraginaceae) հանդիպում է Արևադարձ էլիպսաձև (Heliotropium ellipticum Ledeb.), Զուգատերևազգիներից (Zygophyllaceae)՝ Զուգատերև սովորական (Zygophyllum fabago L.), Տատաշ փռվող (Tribulus terrestris L.), Պատատուկազգիներից (Convolvulaceae)՝ Պատատուկ դաշտային (Convolvulus arvensis L.), Հապուկազգիներից (Resedaceae)՝ Հապուկ դեղին (Reseda lutea L.), Թելուկազգիներից (Chenopodiacea)՝ Թելուկ սպիտակ (Chenopodium album L.), Մատիտեղազգիներից (Polygonaceae)՝ Ավելուկ զանգուր (Rumex crispus L.), Մատիտեղ ճնճղուկի (Polygonum aviculare L.), Իշակաթնուկազգիներից (Euphorbiaceae)՝ Իշակաթնուկ վրացական (Euphorbia iberica Boiss.), Հավակատարազգիներից (Amaranthaceae)՝ Հավակատար սպիտակ (Amaranthus albus L.): Կաղամբազգիներից (Brassicaceae) Կոտեմ բշտիկավորը (Lepidium vesicarium L.) բավականին մեծ հատվածում դոմինանտում է: Կաղամբազգիներից հանդիպում է նաև Վառվռուկ փարա-ավել (Alyssum tortuosum Willd.), Հովվամախաղ սովորական (Capsella bursa-pastoris (L.) Medic.): Բակլազգիներից (Fabaceae) հանդիպում է Իշառվույտ դեղատու (Melilotus officinalis (L.) Desr.), Առվույտ ցանովի (Medicago sativa L.), Կակաչազգիներից (Papaveraceae) հանդիպում է Կակաչ ավազային (Papaver arenarium M.Bieb.) և այլն

ՀՀ Բույսերի Կարմիր գրքում Արմավիրի մարզի համար նշվում է 24 բուսատեսակ:

Դրանցից են Օշան Թամամշյանի (Salsola tamamschjanae Iljin (EN), Օշան սոդակիր (Salsola soda L. (EN), Սֆերոֆիզա աղուտային (Sphaerophysa salsula DC. (VU), Գազ տարօրինակ (Astragalus paradoxus Bunge (EN), Նարդես Շովիցի (Ferila szowitiana DC (VU), Կարմրան ութառէջ (Tamarix octandra Bunge (EN), Կղմուխ Օշեի (Inula aucheriana DC (EN) և այլն:

Կենդանական աշխարհը հարուստ է կաթնասուններով, թռչուններով, կրծողներով, սողուններով, խխունջներով և այլն: Հանդիպում են հարթավայրերին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ:

Տարածաշրջանում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ, որոնցից 28 տեսակը կաթնասուն է, 67-ը՝ թռչուն, 15-ը՝ սողուն և 3-ը՝ երկկենցաղ: Տարածաշրջանում դոմինանտ և բնորոշ տեսակներից են Հայաստանում ամենուրեք տարածված Crocidura (սպիտակատամիկ), Vulpes vulpes L. (աղվե ս), Cricetus auratus Nat. (գերմանամուկ), Mucrotus arvalis Pall. (դաշտամուկ), Perdix perdix L.(կաքավ), Grus grus L. (կռունկ) և այլն:

Տարածաշրջանին բնորոշ ողնաշարավոր տարածքված կենդանիներից են՝ գայլը, աքիսը, եղեգնակատուն, ջրասամույրը, աղվեսը, կոնչան բադը, ճահճակուղբը, լճագորտը, մոխրագույն առնետը ժայռային մողեսը, սողուններից՝ սովորական լորտուն և միջատները: Անողնաշարավոր կենդանիներից հանդիպում են ծովախեցգետինը, մրջյունը, մեղուն, ճռիկը, մորեխը, կաղամբաթիթեռը և այլն: Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով՝ տնային ճնճղուկը, մոխրագույն ագռավը, կաչաղակը և այլն: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Տարածաշրջանի կիսաանապատներում հանդիպում են բազմաթիվ էնդեմիկ անողնաշար տեսակներ, ներառյալ միջերկրածովային, իրանական, կովկասյան և ղրիմյան ծագում ունեցողները: Աղուտային հալոֆիլ համակեցությունների հետ է կապված էնդեմիկ տեսակի՝ Արարատյան որդանի (Porphirophora hamelii) գոյությունը:

Տարածաշրջանին բնորոշ էնդեմիկ կենդանիներից է՝ հայկական որորը (Larus armeniacus But.), Մեղու Դեսպտորիա (Megachile deseptoria Peres): Տարածաշրջանում հանդիպող ՀՀ Կարմիր Գրքում գրանցված կենդանիների տեսակներից հանդիպում են, մասնակիորեն՝ հարավային պայտաքիթը 30 (Rhinolophuseuryales), վարդագույն հավալուսն (Pelecanus onocrotalus), քաջահավ (Plagadis falcinellus Linneaus), փոքր ձկնկուլ (Phalocrocorax pygmaeug Linneaus), Ուբադչի ճպուռ (Gomphus ubadschii Schmidt), Սատունինի սկոտոդրիմադուզա (Scotodrymadusa satunini), Հայկական բնդեռնիկ (Glaphyrus calvaster Zaitzev), Սև անգղ (Aegipus monachus), Տափաստանային մկնաճուռակ (Circus macrourus), Տափաստանային մկնաճուռակ (Glareola nordmanni),

Սատունինի սկոտոդրմադուգա (Scotodrymadusa satunini) և այլն:

Հայցվող տարածքում իրականացված դաշտային այցելություններով հաստատված է, որ տարածքում առանձնահատուկ պահպանության կարիք ունեցող, վտանգված, խոցելի, անհետացման եզրին գտնվող և ՀՀ կարմիր գրքում կամ ԲՊՄՄ կարմիր ցուցակում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները բացակայում են:

5.11. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Նախատեսվող գործունեության տարածքը չի ընկնում որևէ բնության հատուկ պահպանվող տարածքում, ինչպես նաև տարածքի հարևանությամբ չկան ԲՀՊՏ-ներ: Ներկայացված տարաքծին ամենամոտ «Որդան Կարմիր» արգելավայրը գտնվում է ավելի քան 25կմ հեռավորության վրա:

Ներկայացված Ծրագրի իրականացման շրջանակներում ազդեցություն որևէ ԲՀՊՏ-ի վրա չի նախատեսվում, քանի որ գործունեության համար ընտրված տարածքը գտնվում է մոտկա ԲՀՊՏ-ից ավելի քան 25կմ հեռավորության վրա:

5.12. Պատմամշակութային հուշարձաններ

Համաձայն ՀՀ կառավարության 3 հոկտեմբերի 2002 թվականի N 1589-Ն «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ» մասին որոշման, Վանանդ բնակավայրում և իր հարակից տարածքներում չկան պատմամշակութային հուշարձաններ: ՇՄԱԳ շրջանակներում իրականցվել են պատմամշակութային հուշարձանների դաշտային հետազոտություններ, որոնց արդյունքները ներկայացված են Հավելված 3-ում: Ծրագրի իրականացման շրջանակներում պատմամշակութային հուշարձանների վրա որևէ ազդեցություն չի կարող լինել:

5.13. Բնության հուշարձաններ

Համաձայն կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշման՝ Արմավիրի մարզում առկա են հետևյալ բնության հուշարձանները.

Աղյուսակ 11: ՀՀ Արմավիրի մարզի բնության հուշարձանների ցանկը

Երկրաբանական
Առկա չեն:

Ջրաեկրաբանական
Առկա չեն:

Ջրագրական

«Մեծամոր» լիճ	Ա Արմավիրի մարզ, Տարոնիկ գյուղից մոտ 3 կմ հս-արմ

Բնապատմական

Առկա չեն:

Կենսաբանական՝

«Ավազասեր (պսամոֆիլ) բուսականություն»	Արմավիրի մարզ, քաղ. Վաղարշապատ, Զվարթնոց տաճարի մոտ
«Ջրաճահճային բուսականություն»	Արմավիրի մարզ, Մեծամոր լիճ

Նշված պատմամշակութային և բնության հուշարձաններից ոչ մեկը չի գտնվում նախատեսվող գործունեության տարածքում և չի կարող ենթարկվել որևէ բացասական ազդեցության ներկայացված Ծրագրի իրականացման շրջանակներում:

5.14. Սոցիալական և մշակութային ռեսուրսներ

Ծրագրի առաջարկվող տարածքը գտնվում է Արմավիրի մարզում:

Արմավիրի մարզ

Տարածքը՝ 1231 կմ^2;

Համայնքներ, 2024թ. տարեսկզբի դրությամբ՝ 8 (https://www.armstat.am/file/Map/MARZ_02.pdf):

Քաղաքները՝ 3:

Գյուղեր՝ 95;

Բնակչության թվաքանակը 2024թ. տարեսկզբի դրությամբ՝ 259,7 հազ. մարդ:

Այդ թվում՝ քաղաքային – 83,7 հազ. մարդ;

գյուղական – 176,0 հազ. մարդ:

Արմավիրի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արևմտյան հատվածում: Մարզը հյուսիսից սահմանակից է Արագածոտնի մարզին, արևելքից՝ մայրաքաղաք Երևանին, հարավ-արևելքից՝ Արարատի մարզին և արևմուտքից՝ պետական սահմանով՝ Թուրքիային:

Արմավիրի մարզը տարածքով ամենափոքր, սակայն խիտ բնակեցված և բնակչության թվաքանակով ամենամեծ մարզն է ՀՀ-ում:

2023թ.-ին մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 5.9 %,
- գյուղատնտեսություն 21.8 %,

- շինարարություն 3.6 %,
- մանրածախ առևտուր 4.0 %,
- ծառայություններ 1.5 %:

Արմավիրի մարզը ՀՀ-ում առանձնանում է իր գյուղատնտեսությամբ և արդյունաբերությամբ: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են, ինչպես բուսաբուծության (բազմամյա տնկարկներ, բանջարեղեն), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար:

Անասնաբուծության բնագավառում հիմնականում զարգացած է խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությունը, խոզաբուծությունը և թռչնաբուծությունը, իսկ բուսաբուծության մեջ՝ պտղաբուծությունը, խաղողագործությունը, բանջարաբուծությունը և բոստանաբուծությունը: Հիմնականում մշակվում են հացահատիկաընդեղենային և բանջարաբոստանային մշակաբույսեր:

Արդյունաբերությունը մասնագիտացած է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, խմիչքների արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում:

Մարզում է գտնվում Հայկական ատոմային էլեկտրակայանը (Մեծամոր քաղաքի մոտակայքում), որը միակն է Հարավային Կովկասում և գտնվում է Երևանից 36 կմ արևմուտք և զբաղեցնում է 300 հա տարածք:

Մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող ավտոխճուղիներ՝ Երևան– Արմավիր, Երևան–Քարակերտ և Երևան–Գյումրի, ինչպես նաև Երևան–Թբիլիսի երկաթուղին:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Մարզում է գտնվում ՀՀ սահմանային անցման կետերից մեկը՝ «Զվարթնոց» օդանավակայանը:

Մարզկենտրոն Արմավիր քաղաքը (2024թ. տարեսկզբին՝ 28.7 հազ. մարդ) գտնվում է Երևան քաղաքից 44 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Քաղաքում գործում են գինու և կոնյակի, պահածոների, կաթի և կաթնամթերքի, հացի, գազապարատուրայի, մոլիբդենի հարստացման, հաստոցաշինական, ֆուրնիտուրայի և այլ շինանյութերի, կահույքի արտադրության գործարաններ, փոքր և միջին բիզնեսով զբաղվող արտադրական և սպասարկման ծառայություններ իրականացնող կազմակերպություններ:

Արմավիր քաղաքում գործում է խորդենու վերամշակման գործարան, որը միակն է Հայաստանում:

Աղյուսակ 12: Արմավիրի մարզի հիմնական վիճակագրական տվյալները, 2019-2023թթ

	2019	2020	2021	2022	2023
Մարզի մշտական բնակչության թվաքանակը հունվարի 1-ի դրությամբ, 1 000 մարդ	263.8	264.0	264.4	254.1	259.7
այդ թվում՝ քաղաքային	82.4	82.5	82.5	80.9	83.7
գյուղական	181.4	181.5	181.9	173.2	176.0
Բնական աճի գործակիցը, 1 000 բնակչի հաշվով	3.4	-2.2	1.8	5.8	6.6
Համախառն ներքին արդյունք (շուկայական գներով), մլն. դրամ	384 781.2	343 646.5	389 601.2	429 682.3	…
Արդյունաբերական արտադրանքի ծավալը, մլն. դրամ	108 408.0	122 516.0	121 311.9	174 002.9	168 899.0
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը, ընթացիկ գներով, մլրդ. դրամ	178.7	181.0	211.1	225.1	207.2
Շինարարության ծավալը, ընթացիկ գներով մլն. դրամ	37 120.9	23 228.1	37 419.8	33 977.7	24 609.2
Ավտոմոբիլային տրանսպորտի ներհանրապետական բեռնաշրջանառությունը, մլն. տոննա-կմ	5.7	3.1	3.8	3.5	4.5
Ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառությունը, մլն. ուղևոր-կմ	95.4	35.6	34.2	52.0	73.4
Կապի ծառայությունների հասույթը, ընթացիկ գներով, մլն. դրամ	1 552.9	2 312.8	2 969.0	3 413.7	3 851.4
Մանրածախ առևտրի շրջանառությունը, մլն. դրամ	54 395.6	56 975.2	69 589.5	72 084.9	78 578.9
Ծառայությունների ծավալը, մլն.	32 179.9	24 908.6	28 010.1	38 418.0	46 939.5

Դրամ					
Սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նկատմամբ, %	101.5	100.8	107.3	107.5	101.9
Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի իրացման գների ինդեքսները նախորդ տարվա նկատմամբ, %	99.5	91.6	111.3	113.6	86.5
Աշխատանքային ռեսուրսները, 1 000 մարդ	183.3	182.8	183.5	192.7	189.6
որից՝ զբաղվածներ	128.7	124.9	130.9	139.6	143.0
գործազուրկներ	16.9	18.0	15.5	11.6	9.3
Միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ	135 081	138 167	141 190	148 533	169 070
Առևտրային կազմակերպությունների արտադրանքի, ապրանքների, ծառայությունների արտադրության և իրացման վրա կատարված ծախսերը, մլն.դրամ	76 240.0	106 995.8	94 623.7	126 685.2	126 101.5
Առողջության առաջնային պահպանման ծառայություն մատուցող հաստատությունների քանակը	60	60	59	60	59
Գրանցված հանցագործությունների քանակը	1 677	1 707	1 851	2 161	3 051
Կենսաթոշակառուների թվաքանակը տարեվերջին, մարդ	34 032	34 276	34 503	35 159	35 787
Նպաստառու ընտանիքների քանակը, դեկտեմբերի 31-ի դրությամբ	5 675	5 820	5 699	5 289	5 027
Նախադպրոցական հաստատությունների քանակը	105	106	106	112	108
Հանրակրթական դպրոցների քանակը	120	120	120	120	119

Գործող թանգարանների քանակը	3	3	3	3	3
Գրադարանների քանակը	75	76	76	70	69
Մարզական կազմակերպությունների քանակը	6	6	5	5	5

Բաղրամյան համայնք

Առաջին անգամ գրավոր աղբյուրներում Քարվանսարա անունը հիշատակվել է ռուսական իշխանությունների կողմից Լոռվա, Գավառի, Ղազախի դիստանցիայում 1817թ. անցկացրած աշխարհագրի կամերալ ցուցակագրության մեջ: Քարվանսարա գյուղի մասին երկրորդ հիշատակությունն առկա է ռուս մեծանուն գրող Ալեքսանդր Գրիբոյեդովի «Ճանապարհորդական նոթեր»-ում, որը նվիրված է դեպի Պարսկաստան նրա ղեկավարած դեսպանական առաքելությանը: Երրորդ անգամ Քարվանսարա անունը հիշատակվում է 1829թ., երբ ռուսական պետությունն Աղստևի հովիտ է ուղարկում երկրաբանական արշավախումբ: Հայ մեծերից առաջինը եղել է Սարգիս Հասան Զալալյանը, որն իր «Ճանապարհորդություն իմ Մեծ Հայաստան» աշխատության մեջ հակիրճ խոսել է Քարվանսարայի մասին: Ի մի բերելով պատմագրական բոլոր աղբյուրները, կարելի է ասել, որ Քարվանսարա-Իջևանը, որպես բնակավայր, հավանաբար, հիմնադրվել է 1807թ.: Տեղի բնակչության ձևավորման գործում կարևոր դեր են ունեցել նաև շրջակա գյուղերի բնակիչները, որոնց կազմում կային 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղից տեղահանվածները:

Վանանդ բնակավայր

Վանանդը բնակավայր է Հայաստանի Արմավիրի մարզում: Գտնվում է մարզկենտրոնից 24 կմ հարավ-արևմուտք, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1025 մ: Բնակավայրը կազմավորվել է 1984 թվականին: Վանանդի դպրոցը հիմնադրվել է 1986 թ.-ին: Դպրոցը հիմնանորոգվել է 2014 թվականին և 2017 թվականի դրությամբ ունի 160 աշակերտ: Հիմնադրվել է 1979 թվականին և կոչվել չորրորդ տնկարանային տնտեսություն: 1984 թվականին վերանվանվել է գյուղ Վանանդ:

6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

6.1. Նախատեսվող գործունեության բնութագիրը

Նախատեսվող նուշի մշակման արտադրամասը կառուցվելու է վարձակալության իրավունքով «Վանանդ Ագրո» ՓԲԸ-ին պատկանող հողամասում, որը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրի 7-

րդ հողամաս հասցեում: Տարածքի ընդհանուր մակերսը կազմում է 1.98859 հա: Այն գտնվում է Վանանդ բնակավայրից մոտ 5կմ (դեպի հարավ-արևմուտք) հեռավորության վրա, Մ-5 ճանապարհի հարևանությամբ: Տարածի հարևանությամբ չկան շենք-շինություններ և/կամ բնակելի գոտիներ:

Նախատեսվում է կառուցել նուշի ժամանակակից ավտոմատացված կոտրման և սորտավորման արտադրամաս՝ 2 տոննա 1 ժամում արտադրողականությամբ: Արտադրամասի սարքավորումները մատակարարվելու և տեղադրվելու էն ոլորտում առաջատար Borrell կազմակերպության կողմից:

Արտադրամասի շենքը միահարկ է, 2160մ^2 ընդհանուր մակերեսով, կառուցվելու է մետաղական հիմնակմախքով և սենդվիչ պանելներով: Արտադրամսի էլ. սնուցումը իրականացվելու է սեփական ենթակայանից: Նախատեսվում է տեղադրել ջեռուցման, օդափոխության և հակահրդեհային համակարգեր: Արտադրամասում (շահագործման փուլում) աշխատելու է 12-15 մարդ:

Նախատեսվող արտադրամասի ջրամատակարարման և գազամատակարարման համակարգերի կառուցում չի նախատեսվում: Ըստ նախագծի նախատեսվում է օգտագործել միայն արդեն գործող ենթակառուցվածքները՝ ներառյալ բերովի ջրի մատակարարում և սեփական ենթակայանից իրականացվող էլեկտրամատակարարում:

6.2. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ

Նախագծվող շնությունները /նուշի կոտրման և սորտավորման արտադրամասերը, շվաքարանը, վարչական բլոկը, կաթսայատունն իր արհեստանոցով և այլ կից օժանդակ կառույցները/ նախատեսվում է կառուցել «Վանանդ Ագրո» ՓԲԸ կառուցապատողի կողմից, «Վանանդ Լէնդ» ՓԲԸ պատկանող մոտ 2 հա մակերեսով հողատարածքում: Արտադրական կառույցներն իրենցից ներկայացնում են միաթռիչք շինություններ՝ իրականացված հիմնականում մետաղական կոնստրուկցիաներով /մետաղական կրող կմաղք և սենդվիչ պանելներ/:

Գլխավոր հատակագծում համապատասխան գույներով և թվանշաններով նշված են տարածքում գոյություն ունեցող և նախագծվող կառույցներն ու նախատեսվող շինությունները: Նախատեսվող կառույցներից ամենաբարձրի՝ շվաքարանի առավելագույն բարձրությունը չի գերազանցում 12.5 մ նիշը: Տեղանքը հարթ է, և այդ հանգամանքը թույլ է տալիս բոլոր կառույցների հատակի նիշերը պահպանել նույն մակարդակիով, իսկ կառույցների շուրջ իրականացնել բետոնե սալվածք 15 սմ ցածր, +-0,00 նիշից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանակից հողատարածքները

նույնպես պատկանում են կառուցապատողին՝ կառույցը որոշ հատվածներում նախատեսվում է իրականացնել հատկացված հողատարածքի սահմանին կից:

Տվյալ նախագծով նախատեսվող կառույցներն ունեն բեռնատար ավտոմեքենաների մոտեցման և այլ տեխնիկաներով սպասարկվելու հնարավորություն: Ամբողջովին ապահոված են հրդեհաշիջող տեխնիկայի մոտեցումները:

Կառույցների տանիքներն ունեն 8° թեքություն: Ջրահեռացումը կլինի կազմակերպված, ճակատներին արտաքինից մոնտաժված խողովակներով: Արտադրամասերի և շվաքարանի տանիքում ապագայում կտեղադրվեն արևային պանելներ: Ճակատների սենդվիչ-պանելների գույնը ընտրված է սպիտակ, որպեսզի տարվա շոգ ժամանակ նվազեցնի ներքին տարածքի տաքացումը, արտացոլելով արևի ճառագայթները: Միայն վարչական կառույցի արտաքին և ներքին պատերն են նախատեսված կառուցել բետոնե բլոկներից: Ճակատը արտաքինից կերեսապատվի ջերմամեկուսիչ սալերով, այնուհետ կսվաղվի ց/ա սվաղով և կներկվի որակյալ ֆասադային ներկով:

Արտադրական հատվածն ունի 60 սմ բարձրությամբ խարիսխ /ցոկոլ/, իսկ վարչական հատվածի խարիսխը կերեսապատվի բազալտով, նույնպես 60 սմ բարձր.: Ինժեներական լուծումները նկարագրված են աշխատանքային նախագծի համապատասխան բաժիններում:

Ընդհանուր տվյալներ

- Հողամասի մակերես – 1.98հա
- Կառուցապատման մակերես – մոտ 2200մ^2
- Առավելագույն բարձրությունը զրոյական նիշի նկատմամբ՝ 12.5մ

Հիմնական կառույցների հարաչափեր

- Նուշի սորտավորման արտադրամաս - 30 մ x 24 մ
- Նուշի կոտրման արտադրամաս - 30 մ x 24 մ
- Շվաքարան - 20 մ x 24 մ
- Վարչական կառույց - 15 մ x 10 մ
- Կաթսայատուն՝ իր արհեստանոցով - 15 մ x 6 մ

Կոնստրուկցիոն մաս

Գլխավոր շինությունը իրենից ներկայացնում է միահարկ կառույց, որի հատակագծային ընդհանուր առանցքային չափերն են՝ 79.85x23.0 մ, որը կարաններով

բաժանված է 2 մասերի: Շենքի հիմնակմախքը իրենից ներկայացնում է մետաղե սյուներից և ուղղաձիգ կապերից բաղկացած շրջանակային միահարկ համակարգ: Վերջինս ջերմային կարանով բաժանված է 2 մասերի՝ 20.0x23.0մ և 59.3x23.0մ -ի: Լայնական շրջանակները իրենցից ներկայացնում են 23մ թռիչքներով մեկ թռիչքանի շրջանակներ, որոնց սյուները և պարզունակները կազմովի երկտավրեր են:

Սյուների հատվածքը ըստ բարձրության հաստատուն է, իսկ պարզունակները ըստ երկարության ունեն փոփոխական հատվածքներ: Շրջանակի և ընդհանուր շենքի տարածական կոշտությունը ապահովվում է շրջանակի կոշտ հանգույցներով և հիմքում կոշտ ամրակցմամբ: Լայնական շրջանակները տեղադրված են 6.0, 5.65 և 5 մ քայլերով և միմյանց կապվում են երկայնական պարզունակներով և ուղղաձիգ կապերով, ինչպես նաև ծածկի հիմնակմախքով:

Ծածկը իրենից ներկայացնում է հիմնական պարզունակների վրա հենված կավարամածային համակարգ, որի վրա հենվում է տանիքածածկույթի ջերմա և ջրամեկուսացնող սալերը: Ծածկի կոշտությունը ապահովվում է նաև պարզունակների միջև տեղադրվող X-աձև հորիզոնական կապային համակարգը: Կավարամածը նախատեսված է իրականացնել Z -աձև պրոֆիլի հեծաններից: Տանիքը երկլանջ է, ջրահեռացումը՝ կազմակերպավ՝ ներքին:

Հիմքերը կետային են, որոնք միմյանց հետ կապված են հիմնային պահանգներով՝ միայն արտաքին ուրվագծերով: Կետային հիմքերը մետաղական սյուներին ամրակցվում խարսխային հեղյուսների միջոցով, որոնք նախապես թողնվում են հիմքի մեջ:

Արտաքին պատերը նույնպես նախատեսված են թեթև ջերմա - ջրամեկուսացումով սալերից որոնք ամրակցվում են հորիզոնական կավարամածին: Կողային՝ լայնական ուղղությամբ ճակատների համար նախատեսված են ֆախվերկային մետաղե սյուներ, որոնք հիմքին ամրակցվում են կոշտ կերպով իսկ վերնամասում՝ շրջանակի հետ ամրակցվում են ճկուն կերպով այնպես, որ շրջանակին փոխանցեն միայն քամու հորիզոնական ազդեցությունը:

Այլ օժանդակ շինությունները ինչպես նաև գրասենյակային շինությունը նույնպես ունեն մետաղե հիմնակմախք և լուծված են նույնպես շրջանակային համակարգերով, սակայն շահագործվող բոլոր ծածկերը այստեղ նախատեսված են պրոֆիլավորված ե/բ սալի միջոցով, որը հենվում է մետաղե հեծանավանդակի վրա:

Մետ. տարրերի եռակցումը կատարել Э42 էլեկտրոդով, կարի հաստությունը բոլոր չնշված տեղերում ընդունել եռակցվող տարրերի հաստություններից փոքրին հավասար:

Էլեկտրավահանակների սենյակ և էլեկտրաէներգիայի հաշվառման վահանակներ

- Պահեստում նախատեսված է էլեկտրավահանակային սենյակ: Էլեկտրավահանակների սենյակում նախատեսված է շենքի գլխավոր էլեկտրական վահանակը, որը տեղադրվում է հատակին:
- Էլեկտրավահանակների սենյակում տեղադրվում են ջեռուցման և օդափոխության, պոմպակայանի և ընդհանուր ծախսի հաշվառման վահանակները:
- Էլեկտրավահանակայինը տեղակայված է 1-ին հարկում՝ 0.00 նիշի վրա:

Ջեռուցում և օդափոխություն

Ջեռուցում և ներածման համակարգերի ջերմամատակարարում

1. Արտադրամասում և օժանդակ շինությունում նախատեսված են ջրային ջեռուցման, երկխողովականի, համընթաց շարժումով համակարգեր:
2. Ջեռուցման համակարգերը սնվում են շինությանը կից նախատեսված իր սեփական կաթսայատնից:
3. Ջերմատարը ջուր՝ 80-65°C ջեռուցման և ներածման ջերմամատակարարման համակարգերի համար:
4. Որպես ջեռուցման սարքեր նախատեսված են ալյումինե ռադիատորներ:
5. Ջեռուցման խողովակները պոլիպրոպիլենային են PPR, PN20:
6. Ջեռուցման սարքերի ջերմատվությունը կարգավորելու համար նախատեսված են ջերմակարգավորիչ ավտոմատ փականներ, իսկ հետադարձի վրա փական սպասարկման համար:
7. Օդի հեռացումը կատարվում է ռադիատորների վրա տեղադրված օդի ավտոմատ հեռացման փականների միջոցով:
8. Մատակարար և հետադարձ խողովակները անցնում են հատակի միջով և մեկուսացվում են:
9. Ջեռուցման սարքերի վրա նախատեսված են դատարկման փականներ:
10. Ներածման համակարգերի ջերմամատակարարման խողովակները ընդունված են մետաղից և ներկվում են յուղաներկով երկու անգամ, որից հետո մեկուսացվում են 10 մմ հաստությամբ մեկուսիչներով բոլոր տրամագծերի համար:

Հովացում

1. Նուշի սորտավորման արտադրամասում և ճաշարանում նախատեսված է սպլիտ համակարգերով հովացում:

2. Սպլիտ համակարգերի ներքին բլոկները տեղադրվում են հատակին:
3. Նախատեսված են դատարկման պոլիէթիլենային խողովակներ, որոնք հեռացնում են կոնդենսատը:
4. Սպլիտ համակարգերի պղնձե խողովակաշարերը ջերմամեկուսացվում են, ինչպես նաև բոլոր խողովակները խմբավորվում են և փաթաթվում են դեկորատիվ ժապավենով:
5. Ընտրված սարքավորումները կարող են փոխարինվել համարժեք մեկ այլ ֆիրմայի սարքավորումներով, ըստ պատվիրատուի ցանկության:

<u>Օդափոխություն</u>

1. Արտադրամասում, ինչպես նաև օժանդակ շինությունում նախատեսված է մեխանիկական դրդմամբ օդափոխություն:
2. Յուրաքանչյուր տարածքի համար նախատեսված են ներածման և արտածման սարքեր:
3. Ներածման և արտածման բոլոր օդատարերը պատրաստվում են ցինկապատ պողպատից, որոնց հաստությունները նշված են ծավալաթերթերում:
4. Բոլոր տուփերը և օդատարերը ներկվում են յուղաներկով 2 անգամ:
5. Ներածման բոլոր օդատարները մեկուսացվում են 10մմ հաստությամբ սինթետիկ կաուչուկե ջերմամեկուսիչով, իսկ ներածման տուփերը 5մմ հաստությամբ սինթետիկ կաուչուկե ջերմամեկուսիչով:
6. Համակարգերի համարները և սպասարկվող սենյակները ներկայացված են օդափոխության համակարգերի բնութագրում:
7. Միասին և ինքնուրույն աշխատող համակարգեր՝
    - Ն1, Ա1 օդափոխության համակարգերը աշխատում են միասին
    - Ն2, Ա2 օդափոխության համակարգերը աշխատում են միասին
    - Ն3, Ա3 օդափոխության համակարգերը աշխատում են միասին

<u>Ծխահեռացում</u>

1. Հրդեհի ժամանակ արտադրամասում նախատեսված է հակահրդեհային օդափոխության համակարգեր:
2. Ծխահեռացման համակարգերի միջոցով հեռացվում է ծուխը, իսկ թարմ օդի մուտքը կոմպենսացվում է հրդեհի ազդանշանի ժամանակ բացվող դռներով:
3. Օխահեռացման ծխատարները ընդունված են 1.0 մմ հաստությամբ սև մետաղից:
4. Բոլոր ծխատարները մեկուսացվում են EI60 հրակայուն մեկուսիչով:

Կաթսայատուն

Հիմնական տեխնիկական լուծումներ

1. Արտադրական տարածքի ջերմային ծախսերի ապահովման նպատակով նախատեսված են բիովառելիքով աշխատող պողպատե կաթսաներ երկու հատ 200կՎտ ջերմային հզորությամբ, որոնցից երկուսն էլ աշխատող են:
2. Կաթսայատանը որպես աշխատող պոմպեր նախատեսված են հաճախականության կարգավորիչով պոմպեր:
3. Կաթսայատանը նախատեսված է ընդարձակիչ անոթ ջրի ընդարձակման համար և մի շարք այլ սարքավորումներ:
4. Կաթսայատանը թեթև թռչող մակերերես հանդիսանում են ապակյա դուռը և պատուհանները (նայել շին. մաս):
5. Կաթսայատանը նախատեսված է էլ. օդային տաքացուցիչ, որը ձմռանը գազամատակարարման վթարային իրավիճակների ժամանակ միանում է ավտոմատ կերպով, որպեսզի ապահովի հերթապահ ջեռուցում: Էլ. տաքացուցիչի միացման և անջատման համար նախատեսված է ավտոմատիկայի կոմպլեկտ ջերմայինտվիչով:

Օդափոխություն

1. Կաթսայատան սրահում նախատեսված է ներածման և արտածման օդափոխություն բնական դրդմամբ:
2. Արտածումը իրականացվում է դեֆլեկտորի միջոցով, իսկ օդի ներածումը մետաղական ճաղաշարի միջոցով:

Ջերմամեկուսացում

1. Ջերմության կորուստները նվազագույնի հասցնելու նպատակով կաթսայատան մատակարար և հետադարձ խողովակաշարերը մեկուսացվում են 5=50մմ ֆոլգայապատ չայրվող, քարե բամբակով, բացառությամբ ջեռուցման համակարգերի պոլիպրոպիլենային խողովակներից, որոնք մեկուսացվում են 10 մմ հաստությամբ սինթետիկ կաուչուկե մեկուսիչներով: Ջեռուցման մետաղական հետադարձ խողովակները չեն մեկուսացվում, կաթսայատան ջերմային պահանջները բավարարելու նպատակով:
2. Մինչև մեկուսացնելը խողովակների մակերեսները մաքրվում են և ներկվում են յուղաներկով:
3. Չմեկուսացվող խողովակները նույնպես ներկվում են յուղաներկով:

Ընդհանուր ցուցումներ մոնտաժի վերաբերյալ

1. Կաթսայատան խողովակաշարերը մոնտաժվում են էլեկտրոեռակցումային ԳՈՍՏ 10704-91 և ջրագազամուղային ԳՈՍՏ 3262-82 պողպատյա խողովակներով:
2. Բոլոր խողովակաշարերը մոնտաժումից հետո ենթարկվում են հիդրավլիկ փորձարկման:
3. Խողովակաշարերը մոնտաժվում են i=0.002 թեքությամբ:
4. Կաթսայատանը նախատեսված են ավտոմատ օդահաններ' օդահեռացման համար:
5. Կաթսայատանը նախատեսված է նաև ջրի դատարկման համակարգեր (նայել սխեման):

Կազմակերպության շինությունների ջեռուցումը իրականացվում է երկու հատ 200 կՎտ հզորությամբ կաթսայական սարքավորումների միջոցով, ընդամենը՝ 400 կՎտ:

Ջեռուցման օրերը՝ 136 օր/տարի, 15 ժամ/օր կամ 2040 ժամ/տարի:

Որպես վառելիք օգտագործվում են սեփական արտադրության արդյունքում առաջացող նուշի կեղևները, որոնք կարելի է դասել կենսազանգվածի շարքին:

Ջեռուցման արդյունքում առաջացող արտանետումների հաշվարկները կատարվել են ԵՄ CORINAIR մեթոդակարգի գործակիցների միջոցով1: Ըստ նշված մեթոդակարգի կենսազանգված այրող փոքր հզորությամբ /մինչև 1 ՄՎտ/ այրման կայանքների համար օգտագործվում են հետևյալ տեսակարար գործակիցները.

Աղյուսակ 13: Տեսակարար գործակիցներ

№	Արտանետվող նյութ	Չափման միավոր	Տեսակարար գործակից
1	Ազոտի երկօքսիդ	գ/Գիգաջոուլ	80
2	Ածխածնի օքսիդ	գ/Գիգաջոուլ	1000
3	Ածխաջրածիններ սահմանային	գ/Գիգաջոուլ	600
4	Պինդ մասնիկներ (մոխիր)	գ/Գիգաջոուլ	800

[1] EMEP/EEA emission inventory guidebook. Small combustion. Table 3-6 Tier 1 emission factors for NFR source category 1.A.4.b, using biomass 4)

Գիգաջոուլի փոխադրման գործակիցն է՝ 1 ԳՋ = 277.8 կՎտ.ժամ, համապատասխանաբար ժամային և տարեկան արտանետումները կկազմեն.

Աղյուսակ 14։ Տարեկան արտանետումներ

№	Արտանետվող նյութ	Տեսակարար գործակից, գ/կվտ.ժամ	Արտանետումը, գ/ժամ	Արտանետումը, տ/տարի
1	Ազոտի երկօքսիդ	0.288	115.2	0.235
2	Ածխածնի օքսիդ	3.6	1440.0	2.93
3	Ածխաջրածիններ սահմանային	2.16	864.0	1.76
4	Պինդ մասնիկներ (մոխիր)	2.88	1152.0	2.35

Արտանետումների քանակները շատ փոքր են (օրական կտվածքով չափվում են գրամերով) և չեն կարող զգալի ազդեցություն ունենալ մթնալարտային օդի վրա։

<u>Էլեկտրամատակարարում</u>

Ըստ հուսալիության աստիճանի արտադրամասի հոսանքասպառողները պատկանում են 1-ին և 2-րդ կատեգորիայի։ Առաջին կատեգորիայի սպառողներն են՝ վթարային և տարհանման լուսավորությունը, վթարային վարդակային ցանցը, հակահրդեհային ջրամատակարարման սարքավորումները և հակահրդեհային ահազանգի պաշտպանության վահանակը։ Մնացած բոլոր սպառողները պատկանում են 2-րդ կատեգորիայի սպառիչներին։

Գրասենյակային տարածքներում վարդակները տեղադրվում են հատակից 0.3մ բարձրության վրա, արտադրական տարածքներում՝ 1.6մ բարձրության վրա, իսկ սանհանգույցներում՝ 1.3մ բարձրության վրա։ Գրասենյակային տարածքներում անջատիչները տեղադրվում են հատակից 1մ բարձրության վրա, իսկ արտադրական տարածքներում՝ 1.6մ բարձրության վրա։ Սրանք էլեկտրասարքավորումների տեղադրման կանոններն են՝՝ համաձայն շինարարական նորմերի։

Արտադրամասի բոլոր սենքերում և հիմնական անցուղիներում նախատեսված են վթարային լուսատուներ ներկառուցված մարտկոցներով, որոնք տեղադրվում են 3-5մ. բարձրության վրա։

Նախատեսված են նաև էվակուացիոն լուսատուներ՝ մարտկոցներով,

տարհանման ուղղությունը ցույց տալու համար: Տվյալ լուսատուները նորմալ աշխատանքային ռեժիմում /լարման տակ/ գտնվում են անջատված վիճակում: Էլեկտրաէներգիայի ընդհատվելու դեպքում վերջիններս ավտոմատ կերպով միանում են իրենց մեջ ներկառուցված տեղային անկախ աղբյուրին՝ ապահովելով 3 ժամյա աշխատանքային ռեժիմ, որը բավարար է անհրաժեշտության դեպքում տարհանման համար:

Էլեկտրաուժային սարքավորումների կառավարումը նախատեսված է իրականացնել նախագծում նախատեսված ղեկավարման պահարանների և մագնիսական թողարկիչների միջոցով:

Որպես անվտանգության լրացուցիչ միջոց նախագծված է հողանցման օջախ, դիմադրությամբ 4 Օհմ: Բոլոր էլեկտրամոնտաժային աշխատանքները կատարել համապատասխան գործող ՊՈՒԷ-6,7-րդ հրատարակչության:

Արտադրամասի արտաքին էլեկտրամատակարարումը կիրականացվի էլեկտրացանցի կողմից տեխնիկական պայման ձեռք բերելուց հետո, առանձին նախագծով: Բոլոր էլ. մոնտաժման աշխատանքները կատարել համաձայն ՀՀ գործող հակահրդեհային և էլ.տեխնիկական նորմերի և կանոնների:

<u>էլեկտրավահանակների տեղակայում և էլեկտրաէներգիայի հաշվառման վահանակներ</u>

Գլխավոր էլեկտրական վահանակը և էլեկտրաէներգիայի հաշվառման վահանակները տեղակայված են արտադրամասի տարածքում գտնվող էլ. ենթակայանում: Վահանակ տեղադրվում է հատակին:

Տարածքում առկա է գոյություն ունեցող պահեստի էլեկտրամատակարարման ստորգետնյա մալուխը, որը հարկավոր է ապամոնտաժել, ազատելով տարածքը արտադրամասի շինարարության համար: Ապամոնտաժման ենթակա մալուխը ներկայացված է գլխավոր հատակագծի վրա:

Հողային աշխատանքների իրականացումից հետո ապամոնտաժված մալուխը հանձնել պատվիրատուին՝ պահեստավորման / հետագա օգտագործման համար:

Այլ մանրամասներ՝

- Ենթակայանի հեռավորությունը շենքից ուղիղ գծով՝ մոտ 30մ:
- Ուժային սնուցման մալուխների երկարությունը՝ մոտ 60մ:
- Ուժային տրանսֆորմատորի տիպը՝ յուղային:
- Էլ. մալուխների անցկացման համար իրականացվող հոյղային

աշխատանքների ծավալը՝ 119 մ³:
- Ետլիցք՝ 75 մ³:

Մանրմասները ներկայացված են աշխատանքային նախագծերում:

Հակահրդեհային համակարգ

Հրդեհային ազդանշանման համակարգը նախատեսված է հրդեհի սկզբնական փուլում հայտնաբերման, ազդանշանման և հրդեհի արագ վերացման գործընթացի կազմակերպման համար:

Հիմնական բաղադրիչներ՝

- Ծխի տվիչներ (Smoke Detectors): Տեղադրվում են բոլոր հարկերում, առանձնահատուկ ուշադրությամբ՝ միջանցքներում, աստիճանավանդակներում, էլեկտրական սենյակներում:
- Ջերմային տվիչներ (Heat Detectors): Օգտագործվում են տարածքներում, որտեղ ծուխը քիչ է, սակայն ջերմաստիճանի կտրուկ բարձրացումը կարող է ցույց տալ հրդեհի առկայությունը (օրինակ՝ խոհանոցներում):
- Կենտրոնական հսկման վահանակ (FACP): Տեղադրվում է շենքի հիմնական տեխնիկական սենյակում՝ ապահովելով բոլոր տվիչների և ազդանշանային սարքերի կառավարումը:
- Ազդանշանային սարքեր (Sounders and Flashers): Տեղադրվում են յուրաքանչյուր հարկում, ապահովելով տեսանելի և լսելի ահազանգեր բնակիչների համար:

Հիմնական տեխնիկական սենյակում տեղադրվում է նաև համաձայնեցման մոդուլը, տարբեր հակահրդեհային և անվտանգության համակարգերի բաղադրիչների միջև՝ ապահովելու դրանց արդյունավետ և անխափան համատեղ աշխատանքը: Այն հիմնականում օգտագործվում է, երբ համակարգի տարրերը աշխատում են տարբեր էլեկտրական բնութագրերով կամ ունեն տարբերակի անհամատեղելիություն:

Ցուցադրման մոդուլները որոնք տեղադրված են 1-ին հարկի տեխնիկական սենյակում, կարող են ունենալ տարբեր գույների LED լույսեր, որոնք ցույց են տալիս տարբեր կոլորիտներով՝ «կանաչ» (հաջողված աշխատանք), «կարմիր» (սխալ), «դեղին» (նորմալ աշխատանք):

Արտադրական տարածքներում տեղադրված են ինքնաշխատ փոշային հրդեհաշիջման մոդուլներ, որոնք ապահովում են հրդեհի օջախի արագ մարում առանց ջրի կամ գազի կիրառման: Սարքավորումը բաղկացած է մետաղական տարայից, որն իր մեջ պարունակում է հատուկ փոշի և ավտոմատ գործարկման

մեխանիզմ: Հրդեհի դեպքում մոդուլը բացվում է և տարածքում տարածում փոշին՝ խոչընդոտելով այրման գործընթացը:

Խմելու տնտեսական սառը ջրամատակարարում

Նուշի կոտրման արտադրամասի, նուշի սորտավորման արտադրամասի, շվաքարանի, վարչական շինության, կաթսայատան, օժանդակ շինությունների տարածքում չունենալով ջրագիծ, ջրամատակարարումը նախատեսվում է մերովի ջրով: Ջրամատակարարումն ապահովելու համար արտադրամասին կից նախատեսված է պոմպակայան, որտեղ նախատեսված է երկաթբետոնե բաք՝ 1300x4000x2000(H), V=10.2մ3, և պոմպային կայանք 2 պոմպով, ինվերտորով և ղեկավարման վահանակով՝ խմելու-տնտեսական կարիքների համար, մեկը աշխատող, մեկը պահուստային: Պոմպային կայանքի տեխնիկական պարամետրերն են. H=25մ, Q=1.33մ3/ժամ, N=1.5կՎտ, 220Վ: Սառը ջրի մուտքագիծը իրականացվում է 1-ին հարկով, PE100, PN10 De32մմ տրամագծի խողովակով: Բաժանարար գծերը և սանիտարական սարքերի մոտեցումները նախատեսվում է իրականացնել PPR PN16 De-20-32մմ տրամագծի պոլիպրոպիլենային խողովակներով:

Տաք ջրամատակարարում

Արտադրամասի տաք ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել էլեկտրական ջրատաքացուցիչներով: Տաք ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել PPR PN20 De-20-25մմ տրամագծի խողովակներով:

Հակահրդեհային ջրամատակարարում

Հակահրդեհային կարիքների ջրամատակարարումն ապահովելու համար արտադրամասին կից նախատեսված է պոմպակայան, որտեղ նախատեսված է երկաթբետոնե բաք՝ 4000x6500x2500(H), V=52.0մ3, և պոմպային կայանք 2 պոմպով՝ մեկը աշխատող, մեկը պահուստային: Պոմպային կայանքի տեխնիկական պարամետրերն են. H=35մ, Q=36մ3/ժամ, N=6.5կՎտ, 380Վ: Հակահրդեհային ելքը արտադրամասի համար կազմում է 2x5.0լ/վրկ, նախատեսված են d=65մմ, հրշեջ ծորակներ L=20մ փողրակներով և d=16մմ ծայրափողով: Արտադրամասի տարածքում նոր նախատեսվող Φ108մմ խողովակաշարի վրա նախատեսվում է հակահրդեհային հիդրանտ հոր D=1500մմ, H=1800մմ (ՀՀ-1), որտեղ կտեղադրվի հակահրդեհային հիդրանտ:

Կենցաղային կոյուղի

Արտադրամասի կենցաղային կեղտաջրերը ինքնահոս տարբերակով հեռանում են բակային ցանց, հավաքվելով դեպի նոր նախատեսվող սեպտիկ

հոր(Φ1500x3000(H)): Կոյուղու ցանցը իրականացվում է պոլիվինիլքլորիդային ոչ ճնշումային կոյուղու լայնուկավոր PVC DN50-100մմ խողովակներից: Կենցաղային կեղտաջրերի հեռացման համար նախատեսված են 4 հատ թողարկներ 100մմ տրամագծով: Կենցաղային կեղտաջրերը շենքից հեռանում են 1-ին հարկով: Նախագծում նշված բոլոր 90°-ի հորիզոնական տեղադրման ձևավոր մասերի փոխարեն օգտագործել 2 հատ 45°-ի ձևավոր մասեր:

Նախատեսվող սեպտիկ հորի օգտակար ծավալը՝ 3,5 մ^3, դատարկման խաճախականությունը՝ 9-10 աշխ. օր ցիկլով:

Պատկեր 9: Գլխավոր հատակագիծ



Պատկեր 10: Շին. հրապարակի կազմակերպման հատակագիծ



6.3.Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը

Նուշի մշակման արտադրամասի կառուցման աշխատանքները կտևեն մոտ 10 ամիս:

7. ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի այլընտրանքային տարբերակները դիտարկվում են երկու առումով:

7.1. «Ոչ մի գործողություն» այլընտրանքային տարբերակ

«Ոչ մի գործողություն» այլընտրանքային տարբերակը վերաբերում է այն սցենարին, երբ ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրի տարածքում նուշի մշակման արտադրամասի կառուցումը չի իրականացվում: Այս սցենարի դեպքում՝

- Տեղական ֆերմերները և արտադրողները կշարունակեն բախվել մթերված նուշի տեղում վերամշակման հնարավորության բացակայությանը՝ ստիպված լինելով դիմել հեռավոր վերամշակող կենտրոնների:
- Արտադրանքի շուկայում մրցունակության մակարդակը կմնա սահմանափակ՝ տեխնիկական վերամշակման և որակի ստանդարտների չբավարար ապահովման պատճառով:
- Չիրացված կմնան գյուղատնտեսական արտադրության ավելացված արժեք ստեղծելու և արտահանման ներուժի ավելացման

հնարավորությունները:

- Կկորսվի համայնքում նոր աշխատատեղեր ստեղծելու և սոցիալ-տնտեսական ակտիվությունը խթանելու կարևոր ներուժը:
- Տեղական գյուղատնտեսական ենթակառուցվածքների զարգացման տեմպերը կդանդաղեն:

Ուստի, «ոչ մի գործողություն» տարբերակը չի համարվում կենսունակ և կայուն այլընտրանք, քանի որ այն հակասում է ինչպես պետական գյուղատնտեսական քաղաքականության առաջնահերթություններին, այնպես էլ համայնքի տնտեսական և սոցիալական զարգացման նպատակներին:

7.2. Ծրագրի առավելությունները

Առաջարկվող տարբերակը ենթադրում է ժամանակակից նուշի մշակման արտադրամասի կառուցում, որն ունի մի շարք առավելություններ՝ ինչպես տեղական համայնքի այնպես էլ ողջ մարզի համար: Մասնավորապես՝

- Կբարելավվի գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման որակն ու արդյունավետությունը՝ շնորհիվ ժամանակակից սարքավորումներով հագեցած արտադրամասի, որը կգործի սննդամթերքի անվտանգության և որակի միջազգային ստանդարտներին համապատասխան:
- Կապահովվի տեղական արտադրողների համար շուկայում մրցունակ արտադրանքի արտադրություն՝ հնարավոր դարձնելով նաև արտահանման ծավալների աճ:
- Կխթանվի համայնքային և մարզային սոցիալ-տնտեսական զարգացումը՝ նոր աշխատատեղերի ստեղծման և գյուղատնտեսական մասնագիտությունների զարգացման միջոցով:
- Կզարգանան գյուղատնտեսական ենթակառուցվածքները՝ ամրապնդելով արտադրության ամբողջական շղթան՝ մթերումից մինչև փաթեթավորում:
- Արտադրամասը կդառնա նաև գյուղատնտեսական գիտելիքի և նորարարական տեխնոլոգիաների կիրառման կարևոր հարթակ՝ բարձրացնելով տեղական արտադրողների գիտելիքի և հմտությունների մակարդակը:

Բացի այդ, նախագծի իրականացման ընթացքում շինարարական և արտադրական գործընթացները կկազմակերպվեն շրջակա միջավայրի նկատմամբ զգայունությամբ՝ նախատեսելով աղմուկի, փոշու, թափոնների և ջրային ռեսուրսների կառավարման համապատասխան միջոցառումներ: Աշխատանքներում հնարավորինս կներառվի տեղական աշխատուժ՝ համայնքի ներգրավվածությունը և տնտեսական շահաբաշխումը առավելագույնի հասցնելու նպատակով:

8. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ

8.1. Ջուր.

Նուշի կոտրման արտադրամասի, նուշի սորտավորման արտադրամասի, շվաքարանի, վարչական շինության, կաթսայատան, օժանդակ շինությունների տարածքում չունենալով ջրագիծ, ջրամատակարարումը նախատեսվում է բերովի ջրով՝ խմելու համար, տեխնիկականը՝ կօգտագործվի առկա ոռոգման համակարգից, իսկ կեցաղային նպատակների համար կմատակարարվի Վանանդ բնակավայրից: Ցանկացած մատակարարում պետք է իրականացնել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Մինչ շինարարական աշխատանքները կկնքվեն համապատասխան պայմանագրեր:

Ջրամատակարարումն ապահովելու համար արտադրամասին կից նախատեսված է պոմպակայան, որտեղ նախատեսված է երկաթբետոնե բաք՝ 1300x4000x2000(H), V=10.2մ3, և պոմպային կայանք 2 պոմպով, ինվերտորով և ղեկավարման վահանակով՝ խմելու-տնտեսական կարիքների համար, մեկը աշխատող, մեկը պահուստային: Պոմպային կայանի տեխնիկական պարամետրերն են. H=25մ, Q=1.33մ3/ժամ, N=1.5կՎտ, 220Վ: Սառը ջրի մուտքագիծը իրականացվում է 1-ին հարկով, PE100, PN10 De32մմ տրամագծի խողովակով: Բաժանարար գծերը և սանիտարական սարքերի մոտեցումները նախատեսվում է իրականացնել PPR PN16 De-20-32մմ տրամագծի պոլիպրոպիլենային խողովակներով:

Արտադրամասի կենցաղային կեղտաջրերը ինքնահոս եղանակով հավաքվում են բակային ցանցում, որը միացվելու է նոր նախատեսվող սեպտիկ հորին (Φ1500x3000(H)): Հորի պարունակությունը պարբերաբար կտեղափոխվի Վեղիա ջուր ընկերության մոտակա կոյուղու համակարգ: Պայմանագիրը կկնքի դրական եզրակացություն ստանալուց հետո:

Կոյուղու ցանցը իրականացվում է պոլիվինիլքլորիդային ոչ ճնշումային կոյուղու լայնուկավոր PVC DN50-100մմ խողովակներից: Կենցաղային կեղտաջրերի հեռացման համար նախատեսված են 4 հատ թողարկներ 100մմ տրամագծով: Կենցաղային կեղտաջրերը շենքից հեռանում են 1-ին հարկով: Նախագծում նշված բոլոր 90°-ի հորիզոնական տեղադրման ձևավոր մասերի փոխարեն օգտագործել 2 հատ 45°-ի ձևավոր մասեր:

<u>Ջրի ծախսը խմելու և տնտեսական կարիքների համար</u>

Ջրի հաշվարկային ծախսերը որոշվում են համաձայն СНиП 2.04.01-25 ”Внутренний водопровод и канализация зданий'', նորմերի:

Մեկ բանվորի ջրօգտագործման նորմը՝ - 25 լիտր

Օրական, մեկ վարչական աշխատողին – 16 լիտր

Շինարարական աշխատանքային ռեժիմը – 10 ամիս, 22 օր/ամիս, օրը 8 ժամ/օր:

Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը կազմում է.

$$W_{խ.տ.} = n \times N \times T_1 + n_1 \times N_1 \times T_2,$$ որտեղ

n – Ինժեներատեխնիկական /ԻՏ/ աշխատողների թվաքանակն է՝ 5 մարդ

N– ԻՏ աշխատողների ջրածախսի նորմատիվն է, 0.016 մ³օր/մարդ

T_1 – ԻՏ աշխատողների աշխատանքային օրերի ընդհանուր թիվը- 220,

n_1–բանվորների թվաքանակն է (օրական)- 10 մարդ,

N_1 - բանվորների ջրածախսի նորմատիվն է - 0.025 մ³օր/մարդ,

T_2 - աշխատանքային օրերի թիվն է - 220.

Wխ.տ. = 5 x 0.016 մ³ x 220 + 10 x 0.025 մ³ x 220 = 72.6 մ³/շին, 0.33 մ³/օր:

Ջրի ծախս շահագործման փուլում՝

- Առավելագույնը - 0,37լ/վրկ
- Ժամային-0,36 մ³
- Առավելագույն օրական-0,4մ³/օր

<u>Ջրի ծախսը փոշեառաջացման օջախների ջրցանի համար</u>

Այդ ծախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V_1 = S \times K \times T,$$

Որտեղ՝ S – շինհրապարակի և այլ բաց տարածքների թրջվող մակերեսն է, 3100 մ²,

K - ջրցանման նորման – 0.0015մ³/1մ²

T – ջրցանի /տաք և չոր եղանակի/ օրերը, 180 օր/շին:

Այսպիսով՝

V_1 = 3100 x 0.0015 x 180 = 837 մ³/շին:

Միջին օրեկանը կազմում է 4.65մ³:

Ընդամենը շինարարության ընթացքում ջրապահանջը կկազմի՝

72.6+ 837 = 909.6մ³/շին:

Արտահոսք.

Ջրցանը արդյունքում արտահոսք չի առաջանում

Կենցաղային ջրօգտագործման կորուստները կազմում են 5 տոկոս, այստեղից՝

72.6 x (1 – 0.05) = 69 մ³/շին:

8.2. Օգտագործվող նյութեր

Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից:

Գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու են հետևյալ նյութերը.

- մալուխ,

- մետաղ՝ ալյումին, պողպատ,
- ներկ,
- մեկուսիչ նյութեր
- բետոն,
- խիճ,
- փայտանյութ:

Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից: Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա:

9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

9.1. Շինարարական փուլի ազդեցությունը և մեղմող միջոցառումները

9.1.1. Օդային ավազան.

Նուշի մշակման արտադրամասի շինարարության ընթացքում կառաջանան մի շարք նյութերի արտանետումներ: Հիմնական արտանետումը՝ փոշին, կառաջանա հողի փորման, բեռնման և տեղափոխման ընթացքում: Շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ կառաջանան նաև դիզվառելիքի այրման արգասիքներ՝ ազոտի, ծծմբի և ածխածնի օքսիդներ, պինդ մասնիկներ:

ա) Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները

Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումների հաշվարկը կատարվել է ըստ “ВРЕМЕННОЕ МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ ПО РАСЧЕТУ ВЫБРОСОВ ОТ НЕОРГАНИЗОВАННЫХ ИСТОЧНИКОВ В ПРОМЫШЛЕННОСТИ СТРОИТЕЛЬНЫХ МАТЕРИАЛОВ”, Минпромстрой СССР, 1987:

$Q_1 = (P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times G \times 10^6 \times B \times P_6)/3600$ տ/ժամ (բանաձև 1), որտեղ

P_1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է գրունտերում, 0.05

P_2 – 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02

P_3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու միջին արագությունը, 1.0

P_4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.6 (հաշվի առնելով նաև ջրցանը)

P_5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.4

P_6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.5

G – հանվող գրունտի և հողի քանակը՝ 1200 մ^3 ամբողջ շինարակության ընթացքում, կամ 1920տ:

Շինարարական աշխատանքները իրականացվելու են 10 ամիս կամ 220 օր, 1760ժամ:

G = 1920 տ : 1760 ժամ = 1.09 տ/ժամ:

Q_1 = (0.05 x 0.02 x 1.0 x 0.6 x 0.4 x 1.09 x 10^6 x 0.5 x 1.0)/3 600= 0.036 գ /վրկ:

Արտանետումների քանակը շինարարական աշխատանքների արդյունքում կկազմի՝

0.036 գ/վրկ x 1760 ժամ x 3 600վրկ/ժամ : 1 000 000 գ/տ = 0.23 տ:

Հաշվի առնելով նախատեսվող գործունեության բնույթը, օդի աղտոտման մակարդակը գնահատվում է որպես ցածր: Ազդեցությունը ավելի նվազեցնելու նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի և հանվող գրունտի ջրցան:

Ի լրումն վերոնշյալի, ստորև ներկայացված են ՀՀ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքով սահմանված այն պահանջները, որոնք պետք է պահպանվեն շինարարական աշխատանքների ընթացքում: Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցվող (վերակառուցվող, քանդվող) օբյեկտների շինարարության ընթացքում փոշու արտանետումների՝ շինարարական հրապարակից դուրս տարածվելը կանխարգելելու նպատակով շինարարություն, ինչպես նաև փոշու արտանետման հետ կապված աշխատանքներ իրականացնող կազմակերպությունները և քաղաքացիները դրանք իրականացնելու ընթացքում պարտավոր են՝

ա) պարսպապատել շինարարական հրապարակները, իսկ ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,

բ) շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերը լվանալ,

գ) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, սորուն նյութերը և շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,

դ) օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,

ե) հողման աշխատանքներ իրականացնելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,

զ) սորուն նյութերը (ավազ, գաջ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,

է) շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:

Արգելվում է այրել խոզանները, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքները, արոտավայրերի ու խոտհարքների բուսականությունը գյուղատնտեսական, անտառամերձ, անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների հողերում:

Արգելվում է կենցաղային և արտադրական աղբը, ինչպես նաև տերևաթափից առաջացած թափոններն այրել բնական միջավայրում, բնակավայրերում, նրանց շրջակայքում ու դրանց այրման համար չնախատեսված կաթսայատներում, վառարաններում և այլ սարքերում:

Մեղամցնող միջոցառումների վերաբերյալ մանրամասները ներկայացված են ԲԿՊ-ում:

9.1.2. Ջրային ավազան

Շինարարության ընթացքում ջրային ռեսուրսների վրա ազդեցություն չի նախատեսվում:

9.1.3. Թափոնների կառավարում

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, տարածքում առաջացող մի քանի տեսակի թափոնները կարող են բացասաբար անդրադառնալ շրջակա միջավայրի վրա:

Շինարարական աշխատանքների ընթացքում, մետաղական կառուցվածքների եռակցման ընթացքում կձևավորվի եռակցման խարամ: Եռակցման խարամը դասվում է վտանգավորության 3-րդ դասին (թափոնների ծածկագիր՝ 1201060101003): Այն կկուտակվի ժամանակավոր փակ տարաներում և շինարարության ավարտին կհանձնվի լիցենզավորված կազմակերպությանը՝ սահմանված կարգով հեռացման համար:

Ենթակայանում տեղադրվելիք յուղային տրանսֆորմատորի սպասարկման ընթացքում կարող են առաջանալ օգտագործված տրանսֆորմատորային յուղեր և յուղով աղտոտված նյութեր: Դրանք դասվում են վտանգավոր թափոնների 2-րդ դասին և ենթակա են առանձնացված հավաքման, ժամանակավոր պահեստավորման փակ տարաներում և փոխանցման՝ լիցենզավորված կազմակերպությանը՝ սահմանված կարգով հեռացման համար:

- Օգտագործված տրանսֆորմատորային յուղեր՝ 1302050101002, 2-րդ վտանգավորության դաս:
- Յուղով թրջված շորեր, ֆիլտրեր և նյութեր՝ 1502020101002, 2-րդ վտանգավորության դաս:
- Պահեստավորված մետաղական տարաներ (թափոն յուղերի համար) ՝

15010401 01003, 3-րդ վտանգավորության դաս:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) /ծածկագիրը՝ 9120040001004/՝ 96 մ^3, որը կհավաքվի աղբամաններում և պարբերաբար կտեղափոխվի համայնքային կոշտ կենցաղային թափոնների աղբավայր:

Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ /ծածկագիրը՝ 9120060101004/՝ 165 մ^3, ըստ առաջացման կտեղափոխվի համայնքի կողմից հատկացված աղբավայր:

Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտի բոլոր սպասարկման աշխատանքները, քսայուղերով և վառելիքով լիցքավորումը կիրականացվի մասնագիտացված կայաններում, ինչը թույլ կտա բացառել վտանգավոր թափոնների առաջացումը:

Քանի որ, շինարարական տեխնիկան և ավտոտրանսպորտը կսպասարկվեն մասնագիտացված ավտոտեխսպասարկման կայաններում, ապա տեխնիկայի և ավտոտրանսպորտի աշխատանքի արդյունքում գոյացած թափոնների կուտակում տարածքում չի իրականացվելու:

9.1.4. Հողային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության տարածքում հողային ծածկույթի վրա էական բացասական ազդեցություններ չեն նախատեսվում, քանի որ տեղում բերրի հողաշերտ չկա:

Հանված հողային զանգվածը օգտագործվելու է հետլիցքի և տարածքի բարեկարգման համար:

9.1.5. Կենսաբազմազանություն

Ազդեցությունը իրականում չնչին է լինելու, քանի որ տարածքը փոքր է որպեսզի զգալի ազդեցություն լինի տարածաշրջանի կենդանական աշխարհի վրա: Բուսական աշխարհին հասցվող հավանական վնասը ևս չնչին է լինելու քանզի տարածքում չկան վայրի բուսատեսակներ:

Նախատեսվող գործունեության տարածքում շինարարական աշխատանքների ընթացքում բացասական ազդեցության կենսաբազմազանության վրա չի նախատեսվում, քանի որ տարածքը երկար ժամանակ ենթարկվել է մարդածին ազդեցության և այնտեղ կենսաբազմազանությունը գործնականում բացակայում է: Տեղամասի առկա վնասված և չորացած ծառերը կհատվեն և Ծրագրի իրականացման

շրջանակներում կիրականացվի կանաչապատում, ինչը դիտարկվում է նշված և հարակից տարածքների համար որպես դրական ազդեցություն:

Ըստ հետազոտությունների, Ծրագրի իրականացման համար նախատեսված տարածքում չեն հայտնաբերվել ՀՀ Կարմիր Գրքում գրանցված կենդանատեսակներ և բուսատեսակներ: Կարևոր է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ ներկայացվող տարածքը երկրար տարիներ ենթարկվել է մարդածին ազդեցության:

Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու նպատակով հաշվետվության կառավարման պլանով նախատեսվում են համապատասխան միջոցառումներ:

9.1.6. Պատմամշակութային հուշարձաններ

Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Ներկայացված գործունեությունը չի կարող որևէ բացասական ազդեցություն ունենալ պատմամշակութային արժեք ներկայացնող օբյեկտի վրա, քանի որ տարածքում և դրա հարևանությամբ նմանատիպ օբյեկտներ չկան (հնագիտական և պատմա-մշակութային հուշարձանների վրա հնարավոր ազդեցության գահատական-եզրակացությունը ներկայացված է սույն հաշվետվության Հավելված 3-ում):

9.1.7. Էկոլոգիապես զգայուն տարածքներ

Գործունեության վայրը չի առնչվում վայրի բնության կամ այլ արգելոցի, ազգային պարկի, զբոսայգու կամ միջազգային նշանակության այլ տարածքների հետ, ուստի, թե՛ շինարարության և թե՛ շահագործման փուլում որևէ ազդեցություն չի կանխատեսվում:

9.1.8. Արտակարգ իրավիճակներ.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված.

- բնական աղետների (երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների փոփոխության (քամու ուժեղացում, փոթորիկ),
- հրդեհների առաջացման,
- հեղուկ նյութերի արտահոսքի,
- աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Նախատեսվող գործունեության տարածքում ֆիզիկաերկրաբանական

վտանգավոր երևույթներն՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ, տվյալ տարածքում բացակայում են:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների բնույթը և նախատեսված մեղմացնող միջոցառումները, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կլինեն շատ ցածր: Արտակարգ իրավիճակների ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվում են համապատասխան միջոցառումներ:

9.1.9. Աղմուկ և թրթռում

Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների մակարդակը հիմնականում ցածր է, սակայն քանի որ տեղանքում կան բազում այգիներ և իրականացվում է մարդածին գործունեություն, այդ հատվածում աղմուկի մակարդակը գնահատվում է որպես միջին (հիմնականում՝ ավտոտրանսպորտային միջոցներ):

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 Սանիտարական նորմերը հաստատելու մասին N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպատություն աղմուկից» Շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 Հրամանում փոփոխություն կատարելու մասին N79-Ն հրամանների պահանջներին համապատասխան:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն):

Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A):

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների բնույթը, աշխատակիցների և բնակիչների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է ժամանակավոր բնույթ:

Նախատեսվող գործունեության տարածքին մոտ չկան բնակելի և հասարակական շենք-շինություններ, ինչպես նաև այլ օբյեկտներ, որոնք կարող են ենթարկվել ազդեցության:

9.1.10. Սոցիալական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում

Շրջակա տարածքների և գործունեության ազդեցության ենթակա մոտակա հանրային միջավայրի վրա բացասական ազդեցություններ չեն նախատեսվում քանի որ տարածքում բացակայում բնակելի և/կամ հասարակական օբյեկտները, որոնք կարող են ենթարկվել ազդեցության:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությանների կանխման կամ մեղմացման միջոցառումներն ըստ ազդեցության ուղղությունների ներկայացվում են ստորև:

Սոցիալական միջոցառումներ

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու նպատակով նախատեսվում է `

- թույլ չտալ շինարարական աշխատանքների կատարումը սահմանված ժամերից դուրս,
- վտանգավոր տեղամասերում տեղադրել նախազգուշացնող նշաններ,
- որակավորված աշխատակիցների միջոցով իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ շինարարների համար՝ անվտանգության առդիտների, առաջին օգնության և անվտանգության դասընթացների պարբերաբար կազմակերպելում և իրականացում:

9.1.11. Աշխատանքի անվտանգություն և առողջություն

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները ներառում են.

- Աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձի նշանակում, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:
- Միջոցառումների ձեռնարկում՝ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար՝ ցանկապատում, պահակակետեր, ցուցանակներ, արգելող պաստառներ այլ:
- Շինհրապարակում աշխատողների համար հանգստի պայմանների և կենցաղային պայմանների /լվացարան, զուգարան/ ապահովում:
- Կրակմարիչի առկայությանը և հեշտ հասանելիությանը ապահովում շինհրապարակի բոլոր մեքենաներում և հատվածներում:
- Առաջին բուժօգնության դեղատուփի առկայությանը և հեշտ հասանելիության ապահվում շինհրապարակում:
- Համապատասխան արտահագուստի և անհատական պաշտպանական միջոցների առկայության ապահովում:

- Կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորման իրականացում՝ աշխատանքը սկսելուց առաջ: Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերի պարտադիր գրանցում համապատասխան գրանցամատյանում:
- Աշխատողների անհատական պաշտպանության միջոցների համապատասխանության ապահովում ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)
- ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերի պահպանում, աշխատանքների իրականացում այնպես, որ նվազագույնի հասցվի ազդեցությունը հարևան հանգստացողների և շրջակա տարածքների վրա:
- Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինների, համայնքի և բնակիչների պատշաճ նախազգուշացում:

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները շինարարության փուլում կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված միջոցառումների:

9.1.12. Հակահրդեհային միջոցառումներ

Շինարարական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է՝

- իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
- հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,
- շինարարական աշխատանքների տեղամասերում հրդեհաշիջման սկզբնական միջոցների տեղադրում, հակահրդեհային անվտանգության պաստառների առկայության ապահովում, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում կարևորվում է ղեկավարվել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և

առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

9.1.13 Սանիտարահիգենիկ և սանիտարահամաճարակային նորմեր

Գործունեության իրականացման շրջանակներում պարտադիր է պահպանել ՀՀ օրենսդրությամբ սահմանված, բայց դրանով չսահմանափակված բոլոր նորմերը՝ սանիտարահիգենիկ բարձր մակարդակ ապահովելու նպատակով: Այդ պահանջը բավարարելու համար անհրաժեշտ է՝

- պետական մարմիններից ստանալ տեղեկություններ սանիտարահամաճարակային իրադրության շրջակա միջավայրի, բնակչության առողջական վիճակի և սանիտարական կանոնների մասին,
- մասնակցել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման վերաբերյալ պետական մարմինների որոշումների և ծրագրերի մշակմանը, քննարկմանն ու ընդունմանը,
- կատարել Հայաստանի Հանրապետության սանիտարական օրենսդրության պահանջները և արտադրական վերահսկողություն իրականացնել դրա նկատմամբ
- ըստ անհրաժեշտության մշակել ու իրականացնել սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումներ շրջակա միջավայրի աղտոտման վերացման և կանխման, բնակչության աշխատանքի, կենցաղի, կրթության և հանգստի պայմանների բարելավման, ինչպես նաև հիվանդությունների առաջացման և տարածման կանխարգելման ուղղությամբ,
- տեղեկացնել Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությանը, ինչպես նաև տեղական իշխանություններին վթարային իրավիճակների, արտադրության տեխնոլոգիական այն պրոցեսների մասին, որոնք կարող են հանգեցնել կամ հանգեցրել են սանիտարական կանոնների խախտման,
- կատարել սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման վերաբերյալ պետական իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց որոշումները և կարգադրությունները,
- կազմակերպել իրենց աշխատողների սանիտարական կուլտուրայի բարձրացմանը նպաստող հիգիենիկ ուսուցում և դաստիարակություն:

9.1.13. Բարեկարգում և կանաչապատում

Գործունեության իրականացման ընթացքում ծառաթփային բուսականության հատում չի նախատեսվում:

Գործունեության իրականացման շրջանակներում նախատսվում է իրականացնել բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ, որի արդյունքնում ներկայացվող տարածքի որոշակի մասը պատված կլինի թարմ ծառաթփային

բուսականությամբ:

9.2. Բնապահպանական ազդեցությունները և դրանք մեղմող միջոցառումները շահագործման փուլում

9.2.1. Օդային ավազան.

Հաշվի առնելով Ծրագրի տեխնիկական բնութագրերը, շահագործման փուլում օդային ավազանի վրա հնարավոր էական ազդեցություն չի կանխատեսվում:

9.2.2. Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների պահպանման համար նախատեսվում է՝

- աշխատողների համար խմելու ջուրը հասանելի կլինի արտադրամասի տարածքում,
- աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները ապահովված կլինեն արտադրամասի տարածքում:

9.2.3.Թափոնների կառավարում

Տարածքում առաջացած կենցաղային և շինարարական աղբը հավաքվելու է համապատասխան վայրերում և պարբերաբար տեղափոխվելու է Վանանդ բնակավայրի (Բաղրամյանի համայնքապետարանի) կողմից հատկացված աղբավայր:

9.2.4. Հողային ռեսուրսներ

Արտադրամասի շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա որևէ ազդեցություն չի կանխատեսվում:

9.2.5. Կենսաբազմազանություն

Բուսական աշխարհ

Արտադրամասի շահագործման ժամանակ նոր տարածքներ չեն ներառվելու և բուսական աշխարհի վրա որևէ ազդեցություն չի նախատեսվում:

Կենդանական աշխարհ

Արտադրամասի շահագործման ժամանակ նոր տարածքներ չեն ներառվելու և կենդանական աշխարհի վրա որևէ ազդեցություն չի նախատեսվում:

9.2.6. Աղմուկ

Գործունեության իրականացման արդյունքում որոշակիորեն կավելանա տեղանքի աղմուկը, մասնառորապես՝ ցերակային ժամերին, ինչը սակայն չի ունենա էական բացասական ազդեցություն:

9.3. Սոցիալական ծրագիր

Շինարարության և շահագործման փուլերում գործունեության իրականացումն

նաև ունենալու է համայնքի բնակիչների համար դրական սոցիալ-տնտեսական ազդեցություն՝ մասնավորապես, բացվելու են նոր աշխատատեղեր և առաջնահերթություն է տրվելու թե՛ շինարարության և թե՛ սպասարկման ընթացքում ներգրավել մասնագիտական և ոչ մասնագիտական աշխատուժ հարակից համայնքներից/բնակավայրերից:

10. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերպել է իրականացվող աշխատանքների մոնիթորինգ:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիթորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին: Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի կողմից կիրականացվի կանոնավոր մոնիթորինգ, որի շրջանակներում կիրականացվեն մշտադիտարկումների միջոցառումներ և ստուգայցեր՝ երկու շաբաթը մեկ անգամ (մեկ անգամ մեկ ամսվա ընթացքում): ԲԿՊ-ն ներկայացված է Հավելված 1-ում:

11.ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախատեսվող գործունեության վերաբերյալ 1-ին փուլի հանրային լսումը կազմակերպվել և իրականացվել է 2025թ-ի հուլիսի 28-ին ժամը 12:00-ին՝ ՀՀ կառավարության 19.11.2014թ-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան, ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրի՝ վարչական ղեկավարի նստավայրում:

Հանրային քննարկումների մասին պատշաճ կերպով ծանուցվել է հանրությունը (հանրային ծանուցծման և քննարկումների մասին հայտարարությունը հրապարակվել է օրաթերթում) և համայնքին (պաշտոնապես՝ էլ-փոստի գրությամբ):

Հանրային ծանուցման և քննարկումների վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն և համայնքի կողմից տրամադրվել է գործունեության վերաբերյալ նախնական համաձայնության մասին համայնքի ավագանու որոշումը:

Վերը ներկայացվածի հիմնավորող փաստաթղթերը կցված են սույն ՇՄԱԳ-ի փաթեթին:

ՀԱՎԵԼՎԱԾ 1՝ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ. ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հնարավոր բացասական ազդեցություն	Մեղմացնող միջոցառումներ	Պատասխանատու կազմակերպություն	Մեղմացնող միջոցառումների ժամանակը	Վերահսկող կազմակեր-պություն/պատասխանատու	Մեղմացնող միջոցառումների ծախսերը
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ					
Օդային ավազան	- շինարարական հրապարակների պատրաստում, իսկ ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերի և շինությունների շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով ծածկում - մեքենաների և սարքավորումների համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում՝ ավելորդ արտանետումներից խուսափելու համար. - շարժիչների անգործության ռիսկի կառավարում. - շինարարական նյութերով և աղբով բեռնված բեռնատարների մշտական ծածկում. - գրունտի խոնավեցման, ճանապարհի ջրցանի իրականացում՝ ըստ անհրաժեշտության. - օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս. - շինարարական աղբը տեղափոխում դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և	Կապալառու	Շին.աշխատանքների ժամանակ ըստ անհրաժեշտության և կիրառելիության	«Վանանդ Ագրո» ՓԲԸ	ընթացիկ ծախսեր

	հատուկ սահմանված երթուղով - խոզանների, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքների, արոտավայրերի ու խոտհարքների բուսականությունը գյուղատնտեսական, անտառամերձ, անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների հողերում այրման արգելքի ապահովում և կառավարում - կենցաղային և արտադրական աղբի այրումը, ինչպես նաև տերևաթափից առաջացած թափոնների այրումը չիրականացնել բնական միջավայրում, բնակավայրերում, նրանց շրջակայքում ու դրանց այրման համար չնախատեսված կաթսայատներում, վառարաններում և այլ սարքերում				
Ջրային ռեսուրսներ	- գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար խմելու որակի ջրի մատակարարում՝ բերովի (շշերով), - հրդեհաշիջման նպատակով ջրի բաքերի տեղադրում - շինհրապարակում 3 տոննա տարողության պլաստմասե տարայի տեղադրում՝ հոսքաջրերի, անձրևաջրերի հեռացման և հավաքման նպատակով, - ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար տեխնիկական որակի ջրի օգտագործում, որը պետք է բերվի ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, - ճանապարհների ջրցանի իրականացում տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության - շինհրապարակում տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումից առաջացած	Կապալառու	Շին.աշխատանքների ժամանակ՝ ըստ պահանջարկի	«Վանանդ Ագրո» ՓԲԸ	ընթացիկ ծախսեր

	արտադրական հոսքաջրերի ուղղորդում դեպի տարածքում առկա համապատասխան ենթակառուցվածք - շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկման իրականացում համապատասխան մասնագիտացված կետերում - շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդի մատակարարում՝ պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների մեքենաներով՝ ըստ պահանջի:				
Հողային ռեսուրսներ	- գործունեության տարածքում յուղի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահման տեղամասեր նախատեսել միայն խիստ անհրաժեշտության դեպքում, իսկ անհրաժեշտության դեպքում իրականացնել վտանգավոր նյութերի պահեստավորումը՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, -շինարարական նյութերը տեղադրել հատուկ տակդիրների վրա, -ավելցուկային գրունտ չի առաջանա, - հանված հողային զանգվածը օգտագործել հետլիցքի և տարածքի բարեկարգման համար	Կապալառու	Աշխատանքները սկսելուն պես հողային աշխա-տանքների ընթացքում	«Վանանդ Ագրո» ՓԲԸ	ընթացիկ ծախսեր
Ազդեցություն կենսաբազմազանության վրա	- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքների դադարեցում - պահպանության միջոցառումների իրականացում 31 հուլիսի 2014 թվականի N 781-Ն որոշման պահանջներին	Կապալառու	Աշխատանքները սկսելուն պես և հողային աշխա-տանքների ընթացքում	«Վանանդ Ագրո» ՓԲԸ	ընթացիկ ծախսեր

	համապատասխան - շինարարական աշխատանքների իրականացում ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար:				
Թափոնների առաջացում և կառավարում	- շինհրապարակում առաջացող թափոնների ժամանակավոր կուտակում բնապահպանական տեսանկյունից առավել ընդունելի վայրերում և հեռացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով - կենցաղային թափոնների և շինարարական աղբի տեղադրում աղբավայրերում՝ համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված - ցանկացած տեսակի թափոնների բացօդյա այրման արգելքի սահմանում - շինանյութերի ձեռք բերում՝ լիցենզավորված մատակարարներից	Կապալառու	Շին.աշխատանքների ընթացքում, հեռացնել կուտակումից հետո 3-5 օրվա ընթացքում	«Վանանդ Ագրո» ՓԲԸ	ընթացիկ ծախսեր
Աղմուկ և թրթռում	Շինարարության և սարքավորումների աշխատանքի հետևանքով առաջացող աղմուկի ազդեցությունը մեղմելու նպատակով հարկավոր է. - աղմկոտ աշխատանքներն իրականացնել ցերեկվա ժամերին, - մեքենաների շարժիչները պարբերաբար ստուգել և անհրաժեշտության դեպքում կարգաբերել	Կապալառու	Շին. աշխատանքների մեկնարկին զուգընթաց և աշխատանքների ընթացքում	«Վանանդ Ագրո» ՓԲԸ	ընթացիկ ծախսեր
Պատմամշակութային գտածոների հայտնաբերում	- գտածոներ հայտնաբերելու դեպքում աշխատանքների դադարեցում և համապատասխան մարմինների իրազեկվածության ապահովում	Կապալառու	-	«Վանանդ Ագրո» ՓԲԸ	-
Առողջական խնդիրներ, պատահարներ շինարարական	Աշխատանքի անվտանգության ռիսկերը նվազեցնելու կամ դրանցից խուսափելու համար, կկիրառվեն հետևյալ մեղմացնող միջոցառումները.	Կապալառու	-	«Վանանդ Ագրո» ՓԲԸ	-

հրապարակում	- բանվորների և տեղանքի ցանկացած այցելուի համար անձնական պաշտպանիչ արտահագուստի առկայության և ըստ նպատակի օգագործման ապահովում, - անվտանգության դասընթացների և վերապատրաստումների իրականցում աշխատողների համար - շինարարական սարքավորումների ստուգվածության և լիցենզավորված լինելու պայմանների ապահովում, - շինարարական տեխնիկայի՝ ըստ համապատասխան հրահանգների օգտագործման ապահովում, - առաջին օգնության բժշկական փաթեթների և հակահրդեհային սարքավորումների ապահովվածության կազմակերպում, - աշխատանքային ժամերից դուրս գործունեությունը տեղանքում աշխատանքի իրականացման սահմանափակում				

Արտակարգ իրավիճակներ	Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է. - պահպանել հակահրդեհային նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովվել հրդեհաշիջման վահանակով, հակահրդեհային կրակմարիչներով, - մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ դադարեցնել շինարարական աշխատանքները, - շինարարակիան նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:	Կապալառու	Գործունեության ընթացքում	«Վանանդ Ագրո» ՓԲԸ	-
Սոցիալական	Շինարարության փուլում բացվելու են նոր աշխատատեղեր:	Կապալառու	Գործունեության ընթացքում	«Վանանդ Ագրո» ՓԲԸ	-
Բարեկարգում և կանաչապատում	- շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքի մաքրման (ավելորդ թափոններ) և բարեկարգման աշխատանքների (բերել հնարավորինս պատշաճ տեսքի) իրականացում: -շինարարական սարքավորումներն ապամոնտաժում և տարածքից հեռացում:	Կապալառու	Գործունեության ընթացքում	«Վանանդ Ագրո» ՓԲԸ	
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ					
Օդային ավազան	Շահագործման փուլում օդային ավազանի վրա ազդեցություններ չեն նախատեսվում:	-	-	-	-
Ջրային ռեսուրսներ	Շահագործման փուլում հասանելի կլինի աշխատող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգ	«Վանանդ Ագրո» ՓԲԸ	Գործունեության ընթացքում	-	-

	Այս փուլում ջրային ռեսուրսների վրա որևէ ազդեցություն չի նախատեսվում				
Թափոնների կառավարում	-կենցաղային աղբը պոլիէթիլենային պարկերի մեջ հավաքելու և աղբավայր տեղափոխելու պատշաճ իրականացում՝ համայնքապետարանի համաձայնությամբ,	«Վանանդ Ագրո» ՓԲԸ	Գործունեության ընթացքում	-	-
Արտակարգ Իրավիճակներ	-արտադրամասը ապահովվելու է հրդեհաշիջման միջոցներով, տեսահսկման տեսախցիկներով, ազդանշանային համակարգերով, անվտանգության նշաններով և առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով, - աղետներին հակազդելու համակարգերի աշխատունակության պարբերական ստուգումներ, - տեխնածին վթարների, աղետների առաջացման դեպքում մարդու առողջության և անվտանգության պահպանմանը, վտանգավոր տարածքից մարդկանց տարհանմանը ուղղված միջոցառումների իրականացում: - տարերային աղետների (քամու ուժգնացում, փոթորիկ, մրրիկ, երկրաշարժ, սողանք) և վթարների դեպքում էլեկտրասնուցման, էլեկտրահաղորդակցության սարքերի անջատում, վտանգավոր տարածքից մարդկանց տարհանման ապահովում:	«Վանանդ Ագրո» ՓԲԸ	Գործունեության ընթացքում	-	-
Աղմուկ և թրթռում	Շահագործման փուլում որոշակիորեն կավելանա աղմուկի մակարդակը, մասնաորապես ցերեկային ժամերին, ինչը սակայն բացասաբար չի անդրադառնա հարակից բնակավայրի բնականոն կյանքի վրա:	«Վանանդ Ագրո» ՓԲԸ	Գործունեության ընթացքում	-	-
Սոցիալական	- գործունեության տարածքից դուրս այլ տարածքների օգտագործման բացառում,	«Վանանդ Ագրո» ՓԲԸ	Գործունեության ընթացքում	-	-

	-աշխատանքների կազմակերպում միայն ցերեկային ժամերին՝ ճանապարհների խցանումներ առաջացնող գործողությունները՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով, - մեքենաների երթերի հաճախականության կառավարում՝ ճանապարհների ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով։ Շահագործման փուլում ընդգրկվելու են համապատասխան աշխատողներ՝ մոնիթորինգ իրականացնելու նպատակով՝ հերթափոխային գրաֆիկով				
Բարեկարգում և կանաչապատում	- նախատեսված նախագծից դուրս կառուցապատման այլ աշխատանքների, լանդշաֆտային այլ փոփոխությունների իրականացման բացառում, - ռելիեֆի բնական ձևերի, բնահողի բնական վիճակի պահպանման պահանջների պահպանում և ապահովում, ռելիեֆի խախտմանը, կանաչ տարածքների վնասմանն, աղտոտմանն ուղղված գործողությունները սահմանափակում, -գործունեության տարածքի մաքրում՝ թափոններից, լանդշաֆտի վերականգնում	«Վանանդ Ագրո» ՓԲԸ	Գործունեության ընթացքում	-	-

Մշտադիտարկման միջոցառումներ						
Որ պարամետրը պետք է մոնիթորինգի ենթարկվի	*Ինչու պետք է այդ պարամետրը մոնիթորինգի ենթարկվի*	*Որտեղ պետք է պարամետրը մոնիթորինգի ենթարկվի*	*Երբ կամ ինչ հաճախականու-թյամբ պարամետրը պետք է մոնիթորինգի ենթարկվի*	*Ինչպես պետք է պարամետրը մոնիթորինգի ենթարկվի*	*Մոնիթո-րինգի արժեքը*	*Ով է պատասխանատու մոնիթորինգի համար*
Պատմական և մշակութային արժեքներ	Պատմական և մշակութային հուշարձաններին վնաս հասցնելուց խուսափելու համար	Նուշի մշակման արտադրամաս	Նախքան շինարարական աշխատանքները	Գրառումների ուսումնասիրում	Ներառված է նախագծման գնի մեջ	ԿԿ, ԻԳ, Խորհրդատու,
Շինարարական նյութերի որակը	Հավաստիանալ շինարական նյութերի հուսալիության և մարդկանց առողջության համար դրանց անվտանգ լինելու մեջ	Մատակարարի գրասենյակում կամ պահեստում	Մատակարարման պայմանագրի ուսումնասիրման ընթացքում	Փաստաթղթերի ստուգում	Ներառված է շինարարու-թյան գնի մեջ	ՇԿ

Շինարարական նյութերի և թափոնների տեղափոխում	- Սահմանափակել արտանետումներից հողի և օդի աղտոտումը, - Սահմանափակել վիբրացիայի և աղմուկի հետևանքով հանրությանը հասցվող անհանգստությունը, - Նվազեցնել երթևեկության խափանումը Կանխել հողի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտումը Խուսափել շինհրապարակում աղբի և շինարարական նյութերի մնացորդների հետևանքով հնարավոր պատահարներից Շինհրապարակում և դրա շրջակայքում էսթետիկական տեսքի պահպանման համար	-Շինհրապարակ - Շինարարական նյութերի և թափոնների տեղափոխման ճանապարհները	Չնախատեսված ստուգումներ աշխատանքային ժամերին եւ դրանից դուրս	Շարժման ուղղությամբ շինարարական օբյեկտի հարևան ճանապարհների զննում	Ներառված է շինարարու-թյան գնի մեջ	ՇԿ
Շինտեխնիկայի տեղաշարժ	- Խուսափել սարքավորումների շահագործման ընթացքում յուղերով հողի և ջրի աղտոտումից	Շինարարական ճամբար և ժամանակավոր հրապարակներ	Սարքավորումների շահագործման ընթացքում	Գործունեության ստուգում	Ներառված է շինարարու-թյան գնի մեջ	ՇԿ

Հողի էրոզիա	Էրոզիայի երևույթները կանխելու նպատակով	Ջրային հոսքորի ափամերձ տարածքներ և նյութերի պահեստավորման տեղամաս	Ամեն շաբաթ, շինարարական աշխատանքների ընթացքում	Էրոզիայի կանխ-ման միջոցառում-ների և դրանց արդյունավետու-թյան ուսումնասի-րություն	Ներառված է շինարարու-թյան գնի մեջ	ՇԿ
Հողի աղտոտում	Հողի աղտոտումը նվազեցնելու նպատակով	Բոլոր շինհրապարակ-ներում, ներառյալ շինճամբարը, մոտեցման ճանապարհները,	Ամեն շաբաթ, շինարարական աշխատանքների ընթացքում	Վիզուալ ուսում-նասիրություն	Ներառված է շինարարու-թյան գնի մեջ	ՇԿ
	Հողի աղտոտումը նվազեցնելու նպատակով	Ավտոկայանա-տեղեր, մոտեցման ճանապարհներ,	Ամսեկան, շահագործման ընթացքում	Վիզուալ ուսում-նասիրություն	Ներառված է շահագործ-ման գնի մեջ	ՇԿ
Օդի որակ՝ փոշի	Օդի աղտոտումը նվազեցնելու նպատակով	Բոլոր շինհրա-պարակներում, ներառյալ մոտեցման ճանապարհները,	Ամեն օր, շինարարական աշխատանքների ընթացքում	Վիզուալ ուսում-նասիրություն	Ներառված է շահագործ-ման գնի մեջ	ՇԿ
Աղմուկ	Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով	Բոլոր շինհրա-պարակներում, ներառյալ շին-ճամբարը, մոտեցման ճանապարհները,	Ամեն շաբաթ, շինարարական աշխատանքների ընթացքում	Աղմկաչափ	80 ԱՄՆ դոլար	ՇԿ
	Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով	Ավտոկայանատ-եղեր, մոտեցման ճանապարհներ,	Շաբաթական	Աղմկաչափ	80 ԱՄՆ դոլար	ՍԿ

Երթևեկության անվտանգություն	Երթևեկության անվտանգությունն ապահովելու համար	ՇԿ կողմից օգտագործվող բոլոր ընդհանուր ճանապարհները	Ամեն օր, շինարարական աշխատանքների ընթացքում	Վիզուալ ուսումնասիրություն	Ներառված է շինարարության գնի մեջ	ՇԿ
Կենցաղային աղբի առաջացում	Կանխել հողի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտումը	Նուշի մշակման արտադրամաս	Պարբերաբար, շահագործման ընթացքում	Վիզուալ ուսումնասիրություն	Ներառված է շահագործման գնի մեջ	ՍԿ
Շինհրապարակի ռեկուլտիվացիա եւ կանաչապատում	Շինարարության հետևանքով հողածածկի որակի և լանդշաֆտի էսթետիկ տեսքի կորստի նվազեցման նպատակով	Բոլոր շինհրապարակներում, ներառյալ շինճամբարը, մոտեցման ճանապարհները,	Շինարարության ավարտական ժամանակահատվածում	Վիզուալ ստուգում	Ներառված է շինարարության գնի մեջ	ՇԿ, ԻԳ, Խորհրդատու,
Աշխատողների առողջություն և անվտանգություն	Վնասվածքների եւ վթարների հավանականությունը նվազեցնելու նպատակով	Բոլոր շինհրապարակներում	Շինարարական աշխատանքների ամբողջ ընթցքում	Գործունեության զննում, արձանագրությունների և հաշվետվություն-ների ստուգում	Ներառված է շինարարության գնի մեջ	ՇԿ, ԻԳ, Խորհրդատու
		Նուշի մշակման արտադրամաս	Շահագործման ամբողջ ընթցքում	Տեխնոլոգիական մատյանների ստուգում	Ներառված է շահագործման գնի մեջ	ՍԿ, ԻԳ, Խորհրդատու

Պատրաստվա-ծությունը արտակարգ իրավիճակ-ներին	- Նվազեցնել շինարարության ընթացքում աշխատողների անվտանգության ռիսկերը	Բոլոր շինհրապա-րակներում Նուշի մշակման արտադրամաս	Շինարարության ամբողջ ընթացքում	Պարբերական ստուգումներ	Ներառված է շինարարու-թյան գնի մեջ	ՇԿ, ԻԳ

Հասարակու-թյան իրազեկվածու-թյուն	Նվազեցնել շինհրապարակին մոտ գտնվող բնակավայրերի վրա ազդեցության	Տեղական համայնքների գրասենյակներ	Նախքան շինարարական աշխատանքները	Ծանուցման փաստաթղթերի ստուգում Հարցազրույցներ շինհրապարակի մոտ գտնվող բնակավայրերի բնակիչների հետ	Ներառված է շահագործման գնի մեջ	ՆԿ, Խորհրդատու
Հանրային առողջություն եւ անվտան-գություն	Ապահովել բնակիչների համապատասխան նախազգուշացումը	Հիմնական ճանապարհների տեսանելի մասերում, բնակավայրերին մոտ գտնվող տեղամասերի մոտ	Ամսեկան	Նախազգուշական նշանների ստուգում	Ներառված է շինարարության գնի մեջ	ՇԿ, ԻԳ, Խորհրդատու
Տեղական բնակչության զբաղվածու-թյուն	- Մշակել և իրականացնել աշխատողների ընդունման և աշխատավարձերի վճարման անխտրական քաղաքականություն - Շինարարական աշխատանքների համար աշխատողներ ընդունելիս առաջնահերթությունը պետք է տրվի տեղի բնակչությանը	- Տեղական համայնքներ	Պարբերաբար, շինարարության ընթացքում	Հարցազրույցներ	Ներառված է շինարարության գնի մեջ	ՇԿ, Խորհրդատու

Գենդերային ասպեկտներ	Ապահովել աշխատան-քային վայրում/ աշխատողների ճամբարում սեռական ոտնձգությունների բացարձակ անհանդու-ժողականություն Ուժեղացնել տարածքային իշխանությունների ներգրավվածությունը գենդերային խնդիրների հարցում (օր.՝ ստանալ բողոքներ կանանց կոմից)	- Բոլոր շինհրպարակները - Տեղական համայնքներ	Ամեն ամիս, շինարարության փուլի ընթացքում Եռամսյակային, շահագործման փուլի ընթացքում	Հարցազրույցներ կանանց հետ -Բողոքների ստուգում	Ներառված է շինարարու-թյան և շահագործ-ման գնի մեջ	ՇԿ, ՍԿ, Խորհրդատու, ԻԳ
Բողոքների լուծման մեխանիզմ	Ապահովել բողոքների լուծման մեխանիզմի իրականացումը և դրա արդյունավետությունը	- Տեղական համայնքներ	Ամսական	- Բողոքների ստուգում - Հարցազրույց աշխատողների հետ - Հարցազրույցներ համայնքների ղեկավարների և բնակիչների հետ	Ներառված է շինարարու-թյան և շահագործման գնի մեջ	ՇԿ, ՍԿ, Խորհրդատու, ԻԳ

ՀԱՎԵԼՎԱԾ 2՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 5 օգոստոսի 2024 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՎԱՆԱՆԴ ԱԳՐՈ» ՓԲԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արմավիր, համայնք Բաղրամյան գյուղ Վանանդ 7 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Վարձակալության պայմանագիր կնքված 23/07/2024 թ-ին Երևան նոտարական տարածքում սմ-8617

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 04-089-0115-0057
Մակերեսի չափը (հա)՝ 1.98859
Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 05082024-04-0042, գաղտնաբառ՝ NMB3TBF4AEYP

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 1/2

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՎԱՂԻՆԱԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 05082024-04-0042, գաղտնաբառ՝ NMB3TBF4AEYP

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կադաստրի կոմիտե

ՀԱՎԵԼՎԱԾ 3՝ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՆԴ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ «ՎԱՆԱՆԴ ԱԳՐՈ» ՓԲԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՆՈՒՇԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ և ՊԱՏՄԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳԱՀԱՏԱԿԱՆ-ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը չափազանց հարուստ մշակութային ժառանգություն ունեցող երկիր է, որի ակունքները ձգվում են դեպի հազարամյակների խորքերը: Այստեղ հայտնի են շուրջ 33 000 պատմության և մշակույթի հուշարձաններ, ներկայացված 4500 առանձին համալիրներով, որոնք զբաղեցնում են մոտ 20 000 հեկտար ընդհանուր տարածք: Հայաստանի Հանրապետության տարածքում առկա հուշարձանները պաշտպանված են օրենքով և բաժանվում են տեղական և հանրապետական նշանակության: Դրանց մեջ հատկապես առանձնանում են թվով 80 համալիրներ, որոնք ունեն կարևորագույն պատմական, ճարտարապետական, գիտական, արվեստագիտական և մշակութային բացառիկ արժեք (ընդգրկում են մոտ 400 ճարտարապետական հուշարձաններ): Ոչ վաղ անցյալում դրանք ընդգրկված էին ԽՍՀՄ համամյութենական մշակութային և պատմական արժեք ներկայացնող հուշարձանների ցուցակում: Ներկայումս, ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցուցակը, որը, սկսած 1963 թ. համալրվել է առավելքան 630 պատմական հուշարձաններով և բնության տարածքներով ամբողջ աշխարհում, ներառում է նաև Հայաստանի տարածքի որոշ հուշարձաններ: Դրանց շարքում են Հաղպատի վանական համալիրը, Սանահնի վանական համալիրը և միջնադարյան կամուրջը, Էջմիածինն իր բազմաթիվ հուշարձաններով, Զվարթնոցի տաճարը, Գեղարդավանքի համալիրը և Ազատ գետի վերին հատվածը: Հայաստանի տարածքի այլ հուշարձաններ ևս նախապատրաստվում են ընգդրկվելու ՅՈՒՆԵՍԿՈ-ի ցուցակներում, որոնք են՝ Նորավանքի վանական համալիրը, պարսկական Կապույտ մզկիթը և միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինը: Այդ պատճառով մշակութային ժառանգության գնահատումը և կառավարումը նման ծրագրերի իրականացման տարածքի համար գերակա խնդիր է և պահանջում է հնագետի փորձագիտական եզրակացություն: Հնագիտական փորձագիտության խնդիրներն են.

1. Բացահայտել ծրագրի իրականացման հնարավոր ազդեցությունները նյութական մշակույթի սկզբնաղբյուրների վրա, որոնք են շարժական և անշարժ հուշարձանները, հնավայրերը, կառուցվածքները և լանդշաֆտները, որոնք ունեն, հնագիտական, հնէաբանական, պատմական, ճարտարապետական, կրոնական, գեղագիտական կամ մշակութային նշանակություն;

2. Պատրաստել շրջակա միջավայրի ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվության հնագիտական բաղկացուցիչը՝ ներառյալ կառավարման պլանը (ԿՊ-ն), որոնք երկուսն էլ կնախապատրաստվեն ծրագիրը իրականացնող մարմնի (ԻՄ) աջակցությամբ, որն է «Քոնսեկոարդ» ՍՊԸ-ն:

3. Կազմակերպել նախնական և դաշտային հետազոտություններ նախագծի իրականացման տարածքում առկա հնագիտական հուշարձանների համար, տեղորոշել և բնորոշել հայտնի և նոր հայտնաբերված հնավայրերը, հանդես գալ որոշակի առաջարկներով՝ կապված հուշարձանների վրա ազդեցության մեղմացման միջոցառումների մշակման հետ, որոնք պետք է արտացոլվեն ՇՄԱԳ հաշվետվության մեջ և ԿՊ-ում: Ներկայացվող ՇՄԱԳ հաշվետվության մեջ ուսումնասիրված միավորները պետք է բաժանվեն երկու խմբի՝ հուշարձաններ, որոնք կրում են ծրագրի իրականացման անմիջական ազդեցությունը և հուշարձաններ, որոնք չեն ազդվում ուղղակիորեն կամ ազդվում են անուղղակիորեն: Բոլոր ազդվող հուշարձանների համար ծրագրի իրականացումից առաջ պետք է ներկայացվեն որոշակի եզրակացություններ, որոնք հնարավորություն կտան գնահատել նախագծի բացասական ազդեցությունը մշակութային միավորների և նրանց պատմա-աշխարհագրական միջավայրի վրա:

«Վանանդ Ագրո» ՓԲԸ-ի կողմից նուշի մշակման արտադրամասի կառուցման աշխատանքների համար նախատեսված 1,98859 հա ընդհանուր մակերեսով տարածքը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ գյուղի վարչական տարածքում (հողամասի կադաստրային կոդը՝ 04-089-0115-0057)՝ համանուն բնակավայրից մոտ 5 կմ հարավ-արևմուտք, Մ5 ճանապարհի հարևանությամբ (աջ կողմում), Տալվորիկ և Նոր Կեսարիա բնակավայրերի վարչական սահմանների սահմանագծին (**Քարտեզներ 1 և 1ա**):

Երկրաբանական և երկրաձևաբանական տեսանկյունից հայցվող տարածքն իրենից ներկայացնում է Արարատյան գոգավորության հարավ-արևմտյան վերջավորության վրա գտնվող մի հատված, Արաքս գետի ձախ ափին, որտեղ լայն տարածում ունեն միջին և վերին չորրորդական երկրաբանական դարաշրջանի լճային-ալյուվիալ ծագում ունեցող գոյացությունները՝ ներկայացված կավերով, ավազակավերով, ավազներով, ճալաքարակոպճային նստվածքներով, որոնք, իրենց հերթին ծածկված են հոլոցենի դելյուվիալ-էլուվիալ կավային առաջացումներով: Ծովի մակերևույթից գտնվում է միջինում 953-955 մ բարձրության վրա: Ընդհանուր առմամբ, տարածքն ունի լրիվ հարթ ռելիեֆ, որին բնորոշ է չորասեր, տափաստանային բուսածածկույթը (**Լուսանկարներ 1-4**):

Ծրագրի իրականացման ազդեցության գոտում հայտնվող պատմա-մշակութային միավորների բացահայտման և տեղայնացման համար սկզբնական փուլում օգտվել ենք Հայաստանի Հանրապետության Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակ, Արմավիրի մարզ (տե՛ս Հավելված ՀՀ կառավարության 2007 թ. Մարտի 15-ի №385 որոշման) փաստաթղթից, որտեղ, Վանանդ գյուղի վարչական սահմաններում որևէ հուշարձան գրանցված չէ: Ապահովության համար դիտարկել ենք նաև հարևան Տալվորիկ և Նոր Կեսարիա գյուղերի ցուցակները, որոնցից առաջինի վարչական սահմաններում հուշարձաններ գրանցված չկան, իսկ Նոր Կեսարիայի՝ 3.73.1. ցուցիչով ներառված, գյուղի կենտրոնում գտնվող՝ 1984 թ. հուշաղբյուրը, ծրագրի իրականացման դեպքում որևէ ազդեցություն կրել չի կարող:

Բացի ցուցակներում ներառված հուշարձանները, անհրաժեշտ է տեղայնացնել տարբեր արշավախմբերի ուսունասիրության շնորհիվ հայտնաբերված հնավայրերը, որոնք դռևս ընդգրկված չեն հուշարձանների պետական ցանկում, ունեն կամ չունեն նորահայտ հուշարձանի կարգավիճակ, սակայն անկախ դրանից, ենթակա են պահպանման **պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենքի Հոդված 20-ով. Նորահայտ հուշարձանների պահպանության և անվթարության ապահովումը, որը սահմանում է՝** *պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ*

արժեք ունեցող նոր հայտնաբերված կամ նոր արժեքավորված օբյեկտն ստանում է նորահայտ հուշարձանի կարգավիճակ և պահպանվում է մինչև հուշարձանների պետական ցուցակում ընդգրկվելը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով: Նորահայտ հուշարձանը տնօրինող իրավաբանական կամ ֆիզիկական անձը պարտավոր է ապահովել դրա անվթարությունը, իսկ պետության կողմից այն վերցնելու դեպքում սեփականատիրոջ կրած վնասը փոխհատուցվում է օրենսդրությամբ սահմանված կարգով: Հուշարձանի հայտնաբերման փաստը թաքցնող, այն հաշվառելու և ուսումնասիրելու համար արգելքներ ստեղծող, ինչպես նաև գտածոները ոչնչացնող կամ յուրացնող անձը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Արարատյան գոգավորության այս հատվածում հնագիտական ուսումնասիրություններ երբևիցե չեն իրականացվել: Խնդրո առարկա տարածքի վերաբերյալ հնագիտական հաշվետվություններում որևէ տեղեկատվություն ներկայացված չէ: Նման տեղեկատվություն առկա չէ նաև արխիվային փաստաթղթերում կամ հրատարակություններում:

Եվ վերջապես, 2024 թ. հուլիսի 24-ին իրականացվել է տարածքի դաշտային-հնագիտական հետազոտություն: Հետազոտության ընթացքում պարզվեց, այն ժամանակին մելիորացվել է և օգտագործվել գյուղատնտեսական՝ տվյալ դեպքում այգեգործական նպատակներով: Ուսումնասիրության արդյունքում որևէ հնագիտական նյութ չի հայտնաբերվել: Նման նյութեր չեն հայտնաբերվել նաև տեղում իրականացված խրամուղիների կտրվածքներում, որոնք ժամանակին փորվել են ոռոգման նպատակներով: (**Լուսանկարներ 5-6**):

Ամփոփելով ներկայացված տեղեկատվությունը կարող ենք նշել, որ «Վանանդ Ագրո» ՓԲԸ-ի կողմից նուշի մշակման արտադրամասի կառուցման աշխատանքների համար նախատեսված 1,98859 հա ընդհանուր մակերեսով տարածքը, որը գտնվում է Բաղրամյան համայնքի Վանանդ գյուղի վարչական սահմաններում՝ պատմա-մշակութային միավորների վրա հնաարավոր բացասական ազդեցության տեսանկյունից ռիսկեր չունի, քանի որ այստեղ նման միավորներ չեն փաստագրվել: Գտնում ենք, որ շինարարական աշխատանքների ժամանակ հնագիտական

հսկողության սահմանման անհրաժեշտություն ևս առկա չէ:

Հայկ Հայդոսյան
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության Ինստիտուտ, Վաղ Հնագիտության բաժնի Կրտսեր գիտաշխատող

Բորիս Գասպարյան
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության Ինստիտուտ, Վաղ Հնագիտության բաժնի Գիտաշխատող

Դմիտիրի Առաքելյան
ՀՀ ԳԱԱ Երկրաբանության ինսիտուտ
Գիտաշխատող

02.09.2025 թ.

Օգտագործված գրականության ցանկ

1. Պետական ցուցակ Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների՝ Արարատի մարզ (Հավելված ՀՀ կառավարության 2007 թ. Մարտի 15-ի №385 որոշման)

2. Геология Армянской ССР, т. I, Геоморфология, Ответственный редактор Н.В. Думитрашко, Издательство Академии Наук Армянской ССР, Ереван, 1962;

3. Геология Армянской ССР, т. II, Стратиграфия, Ответственный редактор К.Н. Паффенгольц, Издательство Академии Наук Армянской ССР, Ереван, 1964.

Քարտեզներ և լուսանկարներ

Քարտեզ 1



Բաղրամյան համայնքի Վանանդ գյուղի վարչական սահմաններում գտնվող «Վանանդ Ագրո» ՓԲԸ-ի կողմից նուշի մշակման արտադրամասի կառուցման աշխատանքների համար նախատեսված 1,98859 հա ընդհանուր մակերեսով տարածքի տեղադիրքը

Քարտեզ 1ա

Բաղրամյան համայնքի Վանանդ գյուղի վարչական սահմաններում գտնվող «Վանանդ Ագրո» ՓԲԸ-ի կողմից նուշի մշակման արտադրամասի կառուցման աշխատանքների համար նախատեսված 1,98859 հա ընդհանուր մակերեսով տարածքի տեղադիրքը

Քարտեզ 2



Բաղրամյան համայնքի Վանանդ գյուղի վարչական սահմաններում գտնվող «Վանանդ Ագրո» ՓԲԸ-ի կողմից նուշի մշակման արտադրամասի կառուցման աշխատանքների համար նախատեսված 1,98859 հա ընդհանուր մակերեսով տարածքը

Քարտեզ 2ա

Բաղրամյան համայնքի Վանանդ գյուղի վարչական սահմաններում գտնվող «Վանանդ Ագրո» ՓԲԸ-ի կողմից նուշի մշակման արտադրամասի կառուցման աշխատանքների համար նախատեսված 1,98859 հա ընդհանուր մակերեսով տարածքը

Լուսանկար 1. «Վանանդ Ագրո» ՓԲԸ-ի կողմից նուշի մշակման արտադրամասի կառուցման աշխատանքների համար նախատեսված տարածքի հարավ-արևելյան հատվածը (օդալուսանկար)

Լուսանկար 2. «Վանանդ Ագրո» ՓԲԸ-ի կողմից նուշի մշակման արտադրամասի կառուցման աշխատանքների համար նախատեսված տարածքը հյուսիս-արևելյան հատվածը (օդալուսանկար)

Լուսանկար 3. «Վանանդ Ագրո» ՓԲԸ-ի կողմից նուշի մշակման արտադրամասի կառուցման աշխատանքների համար նախատեսված տարածքը հյուսիս-արևմտյան հատվածը (օդալուսանկար)

Լուսանկար 4. «Վանանդ Ագրո» ՓԲԸ-ի կողմից նուշի մշակման արտադրամասի կառուցման աշխատանքների համար նախատեսված տարածքը հարավ-արևմտյան հատվածը (օդալուսանկար)

Լուսանկար 5. «Վանանդ Ագրո» ՓԲԸ-ի կողմից նուշի մշակման արտադրամասի կառուցման աշխատանքների համար նախատեսված տարածքի մելիորացված հատվածներից մեկը (օդալուսանկար)

Լուսանկար 6. «Վանանդ Ագրո» ՓԲԸ-ի կողմից նուշի մշակման արտադրամասի կառուցման աշխատանքների համար նախատեսված տարածքում ոռոգման նպատակով փորված խրամուղի (օդալուսանկար)

ՀԱՎԵԼՎԱԾ 4՝ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅՏԼՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

ՁԼ N 1-2

PM43-B88E-3675-A964

Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնագրին ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am կայքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N ՆԹ-7637-25 01.09.2025թ.

Օբյեկտ **Կառուցում, Նուշի կոտրման արտադրամաս, նուշի սորտավորման արտադրամաս, շվաքարան, վարչական շինություն, կաթսայատուն, օժանդակ շինություններ,**

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերանորոգում, ուժեղացում վերականգնում, գրավոնական նշանակության փոփոխություն)

2160 ք.մ

(ուսերոն բնորոշումը, հզորությունը)

նախագծման փուլերը՝ աշխատանքային նախագիծ, ռիսկայնության աստիճանը՝ IV նախագծային փաստաթղթերի մշակման համար:

(ռիսկայնության աստիճանը (կատեգորիան) նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը **Մարզ՝ Արմավիր, համայնք՝ Բաղրամյան գյուղ Վանանդ 7, 04-089-0115-0057**

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի հասցեը, հողամասի ծանկագիրը)

Կառուցապատող **«ՎԱՆԱՆԴ ԱԳՐՈ» ՓԲԸ / 02671506 / Հայաստան, ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՄԵԼԻՔ ԱԴԱՄՅԱՆ Փ., 2/1**

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը՝ **ԱՆՇԱՐԺ ԳՈՒՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ՝ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ «ՎԱՆԱՆԴ ԱԳՐՈ» ՓԲԸ**

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող ամփոփագիր փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը **մինչև 01.09.2026թ.**

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

Ն Ա Խ Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Մ Ա Ս Ի Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ր Ը

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է	Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության, Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության
	(հողամասի դիրքը քարտեզագրական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)
2. (*) Հողամասի չափսերը	1.98859
	(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը(հա))
3. Հողամասի առկա վիճակը	հարթ չկառուցապատված
	(տեղանքի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը, (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)
4. (*) Տրանսպորտային պայմանները	Տրանսպորտային պայմանները առկա են
	(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)	Կից գործող ինժիներական գծեր և հաղորդակցուղիներ (նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)
6. (*) Կից հողամասեր	գյուղատնտեսական հողեր (կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները, հանանձն ներկայացված փաստաթղթի)
7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)	Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) չկան (հուշարձանի անվանումը)
8. (*) Հատակագծային սահմանափակումներ	Հատակագծային սահմանափակումներ չկան (տնտեսական գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների կիրառման սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ	Նախատեսվում է՝ նուշի կոտրման արտադրամաս 30x24մ, նուշի սորտավորման արտադրամաս 30x24մ, շվաքարան 20x24մ, վարչական շինություն 15x10մկառուցում ՀՀ օրենսդրությամբ և գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան (նիստերով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առնա քաղաքաշինական երաշխիքի փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում կազմակերպված (նպաստավորող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճանապարհների նախագծման, տունկերի, արտաքին դռների, պատուհանների հանձնաժողովների և գունային լուծումների վերաբերյալ)
9.1.(*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)	
9.2.(*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)	
9.3.(*) թույլատրելի բարձրությունը (մետր)	սահմանային հարևանության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Վերանկարի շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովման (հատուկ հաշվարկային մեթոդներ, տեղանկարումների բարձրացման միջոցառումների և այլն)
9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի, (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)	
9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի տարածքին՝ տոկոսներով) (%)	
9.6 կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով՝ (%))	
9.7 այլ պահանջներ	
10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը	

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները	
12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ	Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ
12.1 (*) ջրամատակարարում կոյուղի, տաք ջրի մատակարարում	<Վեոլիա ջուր>ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանների
	(հանձնումն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.2 (*) Էլեկտրամատակարարում	<<Հայաստանի Էլ. Ցանցեր>ՓԲԸ
	(հանձնումն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.3. (*) գազամատակարարում	<Գազպրոմ Արմենիա>
	(հանձնումն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.4. (*) Էլեկտրոնային հաղորդակցություն մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը	
	(հանձնումն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված հայտնագրի տվյալների)
12.5. թույլ հոսանքներ	չկան
12.6. աղբահանություն	ըստ պայմանագրի
13. Տարածքի ինժեներական նախապատրաստում	Տարածքի ինժեներական նախապատրաստում կատարել ըստ նորմերի
	(ոռոգման կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)
14. Բարեկարգում	տարածքը բարեկարգել
	(կանաչապատման պանակներում վերարկելյալ սահմանները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գրվար և այլն)
15. Շինարարական նյութեր	քար, ավազ, բետոն, ամրան շինարարական ստանդարտներին համապատասխան շինարարական նյութեր
	(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների ծածկումների, արտաքին ցանկերի, պատուհանների վերաբերյալ)
16. Պաշտպանական կառույցներ	արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումներ
	(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)
17. Հակահրդեհային պահանջներներ	պահպանել հակահրդեհային անվտանգության պահանջները
	(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)
18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ	
19. Շրջակա միջավայրի պահպանում	ապահովել մթնոլորտային օդին ,ջրին, բնահողին ,ինչպես նաև աղմուկին ,թրթռումներին , էլեկտրամագնիսական ճառագայթմանը և այլ տեխնածին ծագման գործոններին N 2.1.7.003, N 2.1-010 սանիտարական կանոններով և նորմերով , ՀՀՇՆ 22-04 շինարական նորմերով ներկայացվող նորմատիվ պահանջները
	(շրջակա միջավայրը կոտրելուց ազդեցությունից բացառող միջոցառումները)
20. Շինարարության կազմակերպում	Շինարարության կազմակերպում սահմանազատել շին.հրապարակը, նախատեսել շինարարության կազմակերպման և անվտանգության միջոցառումների սխեմա,շինարակական հրապարակների ցանկապատումը կահավորել համապատասխան ճանապարհային նշաններով՝ ապահովելով օրվա մութ ժամերին ու անբավարար տեսանելիության պայմաններում լրացուցիչ ազդանշանային լուսավորումը, աշխատանքների իրականացման օրացույցային գրաֆիկ
	(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քարաքանդի տեղափոխման և տրանսպորտի անխոչընդոտ աշխատանքի ապահովման վերաբերյալ)
21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը	մինչև 01.09.2026թ., նախագծման փուլերը՝ աշխատանքային նախագիծ,
	(ընդհանուր առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ	Պետական համալիր փորձաքննություն

	(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված լիազորությունը տալուց կամ նախաձեռնողի երաշխավորագիրը՝ որում նատարելիս հանձնառությունն իրականացնել անհրաժեշտ)
23. Միջանկյալ համաձայնեցում	(Ոլորտային մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ շահագրգիռ մարմինների հետ հաշվարկի նախագծի նախնական համաձայնեցում, եթե դա է նաև առաջադրանքի փոփոխման հետևանքը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)
24. Հասարակական քննարկումներ	(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով)
25. Համաձայնեցումների կամ Մասնագիտական եզրակացությունների ստացում	(Եթե դա են տալիս օբյեկտի հատակագծման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու ցեղության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատերերը (օգտագործողները) հետ)
26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում	(Եթե դա են տալիս օբյեկտի հատակագծման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու ցեղության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատերերը (օգտագործողները) հետ)
27. Քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված լրացուցիչ պայմաններ	
28. Այլ պայմաններ	չկան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)